ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ-2

Դասագիրք 2-րդ դասարանի համար

Երկրորդ, բարեփոխված հրատարակություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մաս 2

Նկարիչ՝ Խորեն Հակոբյան

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2022

ՀՏԴ 373.167.1+809.198.1 (075.3)
ԳՄԴ 81.2Հ g72
Մ 239

Հեղինակներ՝ Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Ս. Գրիգորյան, Հ. Խաչատրյան

Մ 239 Մայրենի–2: Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք:
/Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Ս. Գրիգորյան, Հ. Խաչատրյան/.
– Եր.: ՄԱՆՄԱՐ, 2022. – 80 էջ:

ՀՏԴ 373.167.1+809.198.1 (075.3)
ԳՄԴ 81.2Հ g72

ISBN 978-9939-62-179-1

© Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., 2010
© ՄԱՆՄԱՐ, 2010

ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ԸՆԿԱՎ



ԻՐԻԿՈՒՆ

Հովհաննես Թումանյան

Արևը շատ էր հոգնել. ման էր եկել ամբողջ օրը:

«Հերիք է,– ասաց,–
Գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերևն ուրախ սվսվում էր, կանգ առավ:

«Էս ինչ է,– ասաց,–
Արևն էլ չի երևում.
Ես էլ պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լռեց:

«Էս ինչ է,– ասաց,–
Ո՛չ տերև է սվսվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»:

Նապաստակը ոստոստում* էր թփերի տակ, ականջները սրեց:

«Էս ինչ է,– ասաց,–
Ո՛չ թռչնակ է ծլվլում,
Ո՛չ տերև է սվսվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»:

83

1 Գտի՛ր, թե ինչ սխալներ կան նկարում: Ո՞րն է ճիշտը:

Հարցեր

1. Ինչո՞ւ էր հոգնել արևը:
2. Ինչ էին անում տերևը, թռչնակը, նապաստակը:
3. Ինչո՞ւ նրանք որոշեցին քնել:

հոգնել

2 Ո՞ր բառերն են «ընկերներ».

պայծառ, տերև, արև, երգող, նապաստակ, կանաչ, վախկոտ, թռչնակ:

Ընդգծի՛ր առարկա ցույց տվող բառերը:

3 Հարցերին պատասխանի՛ր այնպես, որ բոլոր պատասխաններն սկսվեն ո-ով, հ-ով, մ-ով, ե-ով, շ-ով:

Օրինակ՝ ա-ով կարելի է պատասխանել այսպես.

– Ո՞ւր էիր գնացել: (Անտառ:)
– Ի՞նչ տեսար: (Արջ:)
– Վախեցա՞ր: (Այո՛:)
– Ո՞վ կար քեզ հետ: (Աշոտը:)
– Նա ի՞նչ վախեցավ: (Անշո՛ւշտ:)

Որսորդն անտառում որս էր որոնում*, կանգնեց:

«Էս ինչ է,– ասաց,–
Ո՛չ նապաստակ է վազ տալիս,
Ո՛չ թռչնակ է ծլվլում,
Ո՛չ տերև է սվսվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»:

Լուսինը ծագեց, ցած նայեց:

«Ի՜նչ լավ է,– ասաց,–
Ո՛չ որսորդ է ման գալիս,
Ո՛չ նապաստակ է վազ տալիս,
Ո՛չ թռչնակ է ծլվլում,
Ո՛չ տերև է սվսվում,
Ո՛չ արևն է երևում.
Մենակ ես եմ, որ անքուն՝
Քեֆ եմ անում երկնքում»:

որսորդ

Հարցեր

1. Ինչո՞ւ որսորդն էլ ուզեց քնել:
2. Կարդա՛ ինչ ասաց լուսինը:
3. Եթե դու լինեիր լուսինը, ինչ կանեիր:

1 Բառերն այնպես դասավորիր, որ ստացվի նախադասություն.

ա) Ծողում, երկնքում, է, արևը:

բ) Անում, որսորդն, անտառում, էր, որս:

2 Շարունակի՛ր

Մատիտով գծում են: Ռետինով ....: Ջրաներկով ....: Քանոնով ....: Կավիճով ....:

3 Երկու բառից՝ մեկ բառ

թեյ	խոտ	ծով
ափ	ման	հունձ

4 Բանաստեղծությունը վերնագրի՛ր «Առավոտ» և արթնացրու հերոսներին:

5 Ո՞ր բառը պետք է դրվի նախադասության մեջ (քարը, տերևը, մութն, առյուծը):

Երբ .... ընկնում է, շատ կենդանիներ քնում են:

6 Ինչ գույնի է. տերևը, արևը, լուսինը, գիշերը, զատիկը:

7 Հանելուկ

Մի լավ բան կա աշխարհում՝
Գունավոր ու սիրուն.
Ափսոս, տեսնում ենք նրան,
Երբ քնած ենք լինում:

8 Ճշտի՛ր բնագրով և գրի՛ր տետրում:

Արևն անտառում որս էր որոնում:
Նապաստակը երգում էր ծառի վրա:
Որսորդն ուրախ սվսվում էր:
Տերևը ոստոստում էր թփերի տակ:

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Էս թագավորն իր երկրում հայտնում է. «Ով այնպիսի սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

– Թագավորն ապրած կենա, իմ հայրը մի այնպիսի դագանակ* ուներ, որ այստեղից մեկնում էր ու երկնքում աստղերը խառնում:

– Կպատահի,– պատասխանում է թագավորը,– իմ պապն էլ մի ծխամորճ* ուներ, մի ծայրը բերանին էր դնում, մյուս ծայրը մեկնում, արեգակից վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում: 85

Հարցեր

1. Ինչ էր հայտնել թագավորը:
2. Ինչ սուտ հորինեց հովիվը, և թագավորն ինչպես հաղթեց նրան:

1 Շարունակիր

Ստախոսն ինչ է անում: Սուտ է խոսում:

Ճշտախոսն ինչ է անում:

Քշախոսն ինչ է անում:

Շատախոսն ինչ է անում:

Գրիր տետրում:

2 Գտիր, թե ինչ սխալներ կան նկարում: Ո՞րն է ճիշտը:

Գալիս է մի դերձակ*: Ասում է.

– Ներողություն, թագավոր, ես շուտ պիտի գայի, ուշացա: Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու:

– Հա՛, լավ ես արել,– ասում է թագավորը,– բայց լավ չէիր կարկատել. այս առավոտ մի քիչ անձրև թափվեց:

Սա էլ է դուրս գնում:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի՝ կոտը* թևի տակ:

– Դո՛ւ ինչ ես ուզում, այ մարդ,– հարցնում է թագավորը:

Աղքատը ինչ-որ բան է ասում թագավորին:

– Սո՛ւտ ես ասում, ես քեզ պարտք չեմ:

– Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր,– ասում է գյուղացին:

– Չէ՛, չէ՛, ճիշտ ես ասում,– խոսքը փոխում է թագավորը:

– Թե որ ճիշտ եմ ասում...

աղքատ

Հարցեր

1. Ինչպե՞ս դերձակը պարտվեց:
2. Գուշակի՛ր՝ աղքատն ինչ սուտ հորինեց:

3 Կազմի՛ր մի նախադասություն ինչպիսի՞, ո՞վ, ի՞նչ է անում, որտե՞ղ հարցերի միջոցով:

Օրինակ: Փոքրիկ երեխան խաղում է բակում:

1

Ի՞նչ է անում արծիվը:

Ի՞նչ է անում օձը:

Պատասխանները գրի՛ր տետրում:

2 Ամբողջացրո՛ւ նախադասությունը:

Դերձակը (ինչ է անում) երկինքը:
Ստախոսը (ինչ է անում) իր գլուխը:
Գյուղացին (ինչ է անում) թագավորին:
Հովվի հայրը (ինչ է անում) աստղերը:

Առած

Քարի հետևից բնկնողը փիչն էլ կկոծկի:

ԻՆՉՊԵՍ Է ՇՈՒՆԸ ՄԱՐԴՈՒՆ ԸՆԿԵՐ ԴԱՐՁԵԼ

Հեքիաթ

Վաղուց, շատ վաղուց շունն անտառում մենակ էր ապրում: Որոշում է մի ընկեր ճարել: Դիմում է նապաստակին.

– Նապաստակ, արի՛ միասին ապրենք:

– Շատ բարի,– համաձայնում է նա:

Սկսում են միասին ապրել:

Շունը գիշերը հաճախ հաչում է:

– Շուն, մի՛ հաչիր, գայլը կգա և մեզ կուտի,– ասում է նապաստակը:

– Վախկոտի՛ մեկը,– բացականչում է շունը և գնում գայլի մոտ:

Երբ գիշերը նորից սկսում է հաչել, գայլը վախեցած շշնջում է.

– Շուն, ձայնդ կտրի՛ր, արջը կգա և կպատառոտի մեզ:

Թողնելով գայլին՝ շունը վազում է, վազում և, հանդիպելով արջին, ասում է.

– Ա՛ռջ, շատ եմ խնդրում, եկ միասին ապրենք: 87

Հարցեր

1. Ինչո՞ւ է շունը դիմում նապաստակին, գայլին, արջին:
2. Շունն ինչպե՞ս իմացավ, որ նապաստակն ու գայլը վախկոտ են:
3. Ի՞նչ ես կարծում՝ շունն ու արջը կընկերանա՞ն:

շշնջալ, վախկոտ

2 *Տառհանելուկ*

Ի՞նչն է, ի՞նչը. շան առջևում է, փոշու՝ մեջ:

1 **Բառքամոցի**

Նապաստակ բառի տառերով կազմի՛ր նոր բառեր:

3 **Հետաքրքիր է**

Շունն առաջին կենդանին է, որ մարդն ընտելացրել է, այսինքն՝ ընտանի կենդանի է դարձրել:

Առած

Քան բնի կողքին աղվես չի ապրի:

4 **Կարդա՛ և սովորի՛ր**

Բառերի այն խումբը, որը միտք է արտահայտում, կոչվում է նախադասություն:

Արջը համաձայնում է: Գիշերը, ըստ իր սովորության, շունը նորից է սկսում հաչել:

– Ծո՛ւն, շատ եմ խնդրում, մի՛ հաչիր, մարդը, լսելով քո հաչոցը, մեր կողմը կգա,– ասում է արջը:

«Սա ի՞նչ բան է, բոլորն էլ վախենում են»,– մտածում է շունը: Եվ արջից նույնպես բաժանվում է:

Երկար ճանապարհ անցնելուց հետո հանդիպում է մարդուն.

– Մա՛րդ, արի՛ միասին ապրենք:

– Լա՛վ,– համաձայնում է մարդը:

Ինչպես միշտ, շունը գիշերը դարձյալ հաչում է: Մարդն արթնանում է և ասում.

– Ապրե՛ս, հաչի՛ր, հաչի՛ր, ինչքան ուզում ես: Արջն ու գայլը կվախենան և մեր կողմը չեն գա:

– Օ՜հ, ի՜նչ լավ է,– բացականչում է շունը՝ ուրախությունից պոչը շարժելով,– վերջապես ինձ համար անվախ ընկեր ճարեցի:



դարձյալ

Հարցեր

1. Շունն ինչից է իմանում, որ մարդն է ամենաանվախը:

2. Դու ինչպիսի՞ ընկեր կընտրեիր. վախկոտ, համարձակ, բարի, ուժեղ, խելացի: Ինչո՞ւ:

2 Ամբողջացրո՛ւ նախադասությունները:

Շունը գիշերը ....: Նապաստակը վախեցած ....: Արջը զայրացած ....: Մարդը հանգիստ ....:

3 Գտի՛ր «ավելորդը»

այբ բեն ըթ ու օ է

1 Նախադասություններից արտագրիր այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսին է շունը:

Իմ սպիտակ շունը շատ հավատարիմ է: Նա նաև արագավազ է ու ճարպիկ:

4 Նկարագրի՛ր, թե ինչպիսին է շունը:

ՊՈՉԱՏ* ԱՂՎԵՍԸ

Յովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում՝ մի պառավ: Էդ պառավն իր էծը կթում է, գնում է՝ ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթը եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթի ամանը, կաթն ուտում: Պառավը վրա է հասնում, կացինով տալիս է, աղվեսի պոչը կտրում: Պոչատ աղվեսը փախչում է, գնում մի քարի վրա կանգնում ու էսպես խնդրում.

– Տատի՛կ, տատի՛կ, պոչս տո՛ւր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, որտեղ էիր:

Պառավն ասում է.

– Դե գնա իմ կաթը բեր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

– Կովի՛կ, կովի՛կ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, որտեղ էիր:

Կովն ասում է.

– Դե գնա ինձ համար խո՛տ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

– Արտի՛կ, արտի՛կ, խո՛տ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, որտեղ էիր: 89

փափաչել

Հարցեր

1. Ինչ պատահեց աղվեսին:
2. Աղվեսն ինչ էր խնդրում կովից, ինչու՞:
3. Աղվեսն ինչու՞ գնաց արտի մոտ:

1 Որոնք են ընտանի կենդանիներ, որոնք՝ վայրի: Գրի՛ր տետրում:

Գայլ, խոզ, կրիա, կով, աղվես, արջ, ձի, ոչխար:

Ո՞ր ընտանի կենդանիների մասին կարդացիր բնագրում:

2 Բախտ արմատով և դժ, ավոր, ան ածանցներով կազմի՛ր բառեր:

Ինչ կարող ես ասել այդ բառերի մասին:

Առած

Հողվեսն իր պոչն է վկա բերում:

Արտն ասում է.

– Դե գնա ինձ համար ջուր բեր:

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

– Աղբյուր, աղբյուր, ջուր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչամ աղվես, որտեղ էիր:

Աղբյուրն ասում է.

– Դե գնա կուժ* բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

– Աղջիկ, աղջիկ, կուժդ տուր ինձ, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրն ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչամ աղվես, որտեղ էիր:

90

1 Կազմիր բառի վերջին երեք տառով սկսվող նոր բառ.

քարկտիկ, ընկեր, գիշեր, որտեղ, համար:

Օրինակ՝ բանալի – ալիք:

2 Գտիր՝ որ կենդանին ինչ է անում, և գրիր տետրում.

շունը	բառաչում է
կատուն	հաչում է
կովը	մլավում է
ձին	մկկում է
այծը	խրխնջում է

3 Պոչ արմատով և ան, ավոր ածանցներով կազմիր երկու բառ:

Ինչ կարող ես ասել այդ բառերի մասին:

4 Շարունակիր

միս – մսեղեն
կտոր – ....
բանջար – ....
հաց – ....
ջուր – ....

5 Շարունակիր

սեր – անսեր
գլուխ – ....
սիրտ – ....
մազ – ....
ձյուն – ....

Աղջիկն ասում է.

– Դե գնա ուլունք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է չարչու* մոտ:

– Չարչի՛, չարչի՛, ուլունք տուր ինձ, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրն ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, որտեղ էիր:

Չարչին ասում է.

– Դե գնա ինձ համար ձո՛ւ բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ.

– Հավի՛կ, հավի՛կ, ձո՛ւ-ձո՛ւ տուր ինձ, ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրն ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, որտեղ էիր:

Հարցեր

1. Ուրիշ ո՞ւմ մոտ գնաց աղվեսը և ի՞նչ խնդրեց:
2. Աղվեսն ի՞նչ պիտի աներ կուժը:
3. Աղվեսն ի՞նչ է խնդրում մանր-մունր բաներ վաճառող չարչուց: Ինչո՞ւ:
4. Աղվեսն ինչո՞ւ է գնում հավի մոտ:

☺ Խնդուկ

Ուսուցչուհին.

– Ես հանձնարարել էի շարադրություն գրել աղվեսի մասին երկու էջի չափով: Իսկ դու միայն կես էջ ես գրել:

– Ես գրել եմ պոչատ աղվեսի մասին:

Հավն ասում է.

– Դե գնա ինձ համար կո՛ւտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի* մոտ:

– Կալվո՛ր, կալվո՛ր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավն ինձ ձու տա, ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրն ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛ւտ աղվես, որտե՞ղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է, մի բուռ կուտ է տալիս: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու է տալիս, ձուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալիս, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալիս, կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալիս, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալիս, խոտը տանում է կովին, կովը կաթ է տալիս, կաթը տանում է պառավին, պառավը պոչը տալիս է իրեն. կցում է, կցմցում, վազում է, գնում իր ընկերներին հասնում:

Մեղմ

Հարցեր

1. Աղվեսը մի բուռ կուտն ումից ուզեց և ինչի՞ համար:
2. Աղվեսն ինչպե՞ս կարողացավ կցել-կցմցել իր պոչը:
3. Ընկերներիդ հետ քննարկի՛ր՝ ինչ կպատահեր, եթե կալվորն էլ չխղճար աղվեսին: Ինչ կաներ աղվեսը. հորինի՛ր շարունակություն:
4. Աղվեսն ինչո՞ւ չէր ուզում, որ ընկերներն իրեն «պոչատ» ասեն:

ԲԱՌԱՂՅՈՒՍԱԿ

օ	ր	ձ	ու	ք	ու	մ
ձ	կ	ա	թ	ա	լ	ա
կ	ու	տ	օ	ր	ու	ծ
կ	ս	կ	ու	ժ	ն	ու
ր	խ	ո	տ	և	ք	ն
ա	ն	ու	ն	պ	ո	չ
կ	ջ	ու	ր	լ	ո	ր

1 Աղյուսակում գտի՛ր աղվեսի խնդրած առարկաների անունները:



2 Ամբողջացրո՛ւ շղթան և գրի՛ր տետրում:

3 Եթե ընտրես ճիշտ բառը, ապա կհիշես քո իմացած առածը:

Փորձված աղվեսը երկու ոտքով է ընկնում . . . . . .:

(տունը, հավաբունը, թակարդը)

ԵՐԵՔ ԱՐՋԻ ՀԵՔԻԱԹԸ

Լև Տոլստոյ

Մի աղջիկ է լինում: Մի անգամ այս աղջիկը անտառ է գնում: Անտառում մոլորվում* է, վերադարձի ճամփան չի գտնում, գալիս է դեմ առնում մի տնակի: Դուռը բաց է լինում: Նայում է, տեսնում՝ տանը ոչ ոք չկա: Ներս է մտնում: Դու մի՛ ասա, այս տնակում երեք արջ է ապրում՝ հայրը, մայրը և նրանց քոթոթը*: Նրանք այդ ժամանակ գնացած են լինում անտառում ման գալու: Տնակն ունենում է երկու սենյակ. մեկը՝ սեղանատուն*, մյուսը՝ ննջարան: Աղջիկը սեղանատուն է մտնում, տեսնում՝ սեղանին դրված երեք աման ապուր*: Առաջինը՝ հոր ամանը, մեծ է լինում, երկրորդը՝ մոր ամանը՝ միջակ, երրորդը՝ քոթոթի ամանը՝ փոքրիկ: Ամեն մի ամանի մոտ էլ մի-մի գդալ է լինում՝ մեծ, միջակ ու փոքր: Աղջիկը վերցնում է մեծ գդալը, ուտում մեծ ամանից. անհամ է լինում: Հետո վերցնում է միջակ գդալը, ուտում միջակ ամանից. դուրը չի գալիս: Հետո վերցնում է փոքր գդալը, ուտում փոքր ամանից: Տեսնում է՝ փոքր ամանի ապուրը համեղ է: 93

Վերադարձ, ճամփա

Հարցեր

1. Ինչ արեց անտառում մոլորված աղջիկը:
2. Աղջիկն ինչու՞ չի ուտում մեծ, միջակ ամաններից, այլ ուտում է փոքրից:



2 Ինչ բառ է գրված: Գտիր բաղադրիչները և դրանցով կազմիր նոր բառեր:

1 Կազմիր բառի վերջին երկու տառով սկսվող նոր բառ.
պատասխան, դանդաղ, տակ, ահա, հետքեր, այգի:
Օրինակ՝ ահա – հանելուկ:

3 Ո՞ր գազանի բնորոշ հատկանիշներն են.
մեղրասեր է, ծուռ թաթեր ունի, բրդոտ է, փնթփնթան է:

Աղջիկն ուզում է նստել, տեսնում է երեք աթոռ. մեկը՝ մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր: Բարձրանում է մեծ աթոռին. ընկնում է: Նստում է միջակ աթոռին. անհարմար է: Նստում է փոքր աթոռին. շատ հարմար է լինում: Վերցնում է փոքր ամանը, դնում ծնկներին ու սկսում փոքր գդալով ուտել: Ուտում է, կշտանում ու սկսում աթոռով ճոճվել: Աթոռը կոտրվում է, աղջիկը վայր է ընկնում: Վեր է կենում ու մտնում մյուս սենյակը: Մյուս սենյակում երեք մահճակալ է լինում. մեկը՝ մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր: Պառկում է մեծ մահճակալին, տեսնում է՝ շատ է լայն: Միջակին է պառկում, տեսնում է՝ շատ է բարձր: Փոքրի վրա է պառկում, տեսնում է՝ հենց իրենն է, որ կա, ու քնում է:

Արջերը քաղցած գալիս են, որ ճաշեն: Հայրը մոտենում է իր ամանին, նայում է ու զարհուրելի* գոռում.

– Այս ո՞վ է կերել իմ ամանից:

Մայրը մոտենում է իր ամանին ու փնթփնթում.

– Այս ո՞վ է կերել իմ ամանից:

Քոթոթն էլ, որ տեսնում է իր դատարկ ամանը, գոռոռում է.

– Այս ո՞վ է կերել իմ ապուրը: 94

երրորդ, գրալ

Հարցեր

1. Աղջիկը ո՞ր աթոռն ընտրեց և ինչո՞ւ:
2. Ի՞նչ է անում աղջիկն ուտելուց հետո:
3. Ի՞նչ նկատեցին բաղցած արջերը, երբ մտան տուն:

1 Նախադասությունները «բանդվել» են: Վերականգնի՛ր և գրի՛ր տետրում:

հիվանդ կլինես: | և չաշխատես, | Եթե չափավոր ուտես | առողջ կլինես: | և աշխատես, | Եթե ագահաբար ուտես

Հիշի՛ր, թե որ բնագրին են վերաբերում այս նախադասությունները:

2 Շարունակի՛ր

առյուծ – կորյուն

արջ – .... կով – ....

ոչխար – .... այծ – ....

խոզ – ....

Բառազույգերը գրի՛ր տետրում:

Հայրը նայում է իր աթոռին ու գոռում.
– Այս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:
Մայրն է նայում իր աթոռին և փնթփնթում.
– Այս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:
Քոթոթն է նայում իր կոտրված աթոռին ու գռմռում.
– Այս ո՞վ է նստել իմ աթոռին ու կոտրել:
Մտնում են մյուս սենյակը: Հայրը նայում է իր մահճակալին ու գոռում.
– Այս ո՞վ է պառկել իմ անկողնուն ու տրորել:
Մայրը նայում է իր մահճակալին ու փնթփնթում.
– Այս ո՞վ է պառկել իմ անկողնուն ու տրորել:
Քոթոթն է նայում իր անկողնուն ու գռմռում.
– Այս ո՞վ է պառկել իմ անկողնում:
Հանկարծ աղջկան նկատում է ու այնպես ճղճղում, կարծես մորթում են իրեն.
– Այս ո՞վ է... գտել եմ... բռնեցեք... վա՛յ... վա՛յ... բռնեցեք:
Եվ ուզում է աղջկան կծել: Աղջիկը վախից վեր է թռչում, աչքերը բաց անում և տեսնում, որ... այս բոլորը երազ էր:

Հարց

Արջերն ինչպե՞ս վերաբերվեցին աղջկա առածներին:

պառկել, մորթել

1 Վանկատի՛ր հետևյալ բառերը և գրի՛ր տետրում.
բարձրանալ, վերցնել, կշտանալ, փնթփնթալ, կոտրվել:

2 Պատմի՛ր քո երազներից մեկը:

3 «Այս ո՞վ է նստել իմ աթոռին» նախադասությունն ասա այնպես, ինչպես ասում են հայր արջը, մայր արջը, քոթոթը:

4 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

ԱՌԱՋԱԴՐՈՒՄ Է ԳԻՐՔԸ

1 Այո՛, թե՞ ոչ

Յուրաքանչյուր հարցին պատասխանի՛ր այո՛ կամ ո՛չ:

Կովը խրխնջում է:

Կատուն բույն հյուսում է:

Ձուրը աղի լինում է:

Համակարգիչը թռչում է:

Ձայլամը երկու ոտք ունի:

Սխալ նախադասությունները ճշտի՛ր և գրի՛ր:

Օրինակ: Կովը բառաչում է:

2 Գրի՛ր այս տառերի անունները: Կարդա՛, թե ինչ է գաղտնագրված.

Ս Դ Ն Շ Ք Ն Շ Ն Մ:

3 Հարուստ, առողջ և աշխատել բառերն օգտագործի՛ր նախադասությունների մեջ:

Օրինակ: Լավ է հարուստ լինել մտքով, քան փողով:

4 Լրացրո՛ւ նախադասությունները:

(Ինչպիսի՞) տերևները (ի՞նչ էին անում):

(Ինչպիսի՞) կաղնին (ի՞նչ էր անում):

5 Ինչպե՞ս են տեղաշարժվում մարդը, ձուկը, թռչունը, մորեխը, շունը, օձը:

Օրինակ: Մարդը քայլում է:

6 Նույնտառիկներ



Բառի բոլոր տառերով կազմի՛ր նոր բառ.

նյութ, լծել, ամրակ, ուզել:

Օրինակ՝ ամրակ – կամար:

7 Շարունակի՛ր

ձայն – ձայնել

երազ – ....

ուրախ – ....

ժպիտ – ....

անձրև – ....

Որոշի՛ր բառերին տրվող հարցերը:

8 Ո՞րն է «ավելորդը»: Ինչո՞ւ:

Առու, գետ, ծով, ջրվեժ, հեղեղ:

ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ԸՆԿԱՎ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Այս բաժնի հեքիաթներից քեզ ո՞րն առավել դուր եկավ: Պատմի՛ր դրա համառոտ բովանդակությունը:
2. Հիշի՛ր այն հեքիաթի վերնագիրը, որի հերոսը շարունակ պարծենում էր:
3. Նկարազարդի՛ր քեզ դուր եկած հեքիաթը: Նկարածդ պատմի՛ր:
4. Որոշի՛ր, թե քո ընթերցած հեքիաթներում նկարագրված որ դեպքերը կարող են իրական լինել, որոնք՝ ոչ:
5. Հորինի՛ր մի հեքիաթ, որի հերոսները քո սիրելի կենդանիներն են:
6. Ի՞նչ են սովորեցնում մեզ հեքիաթները:
7. Ո՞ր հեքիաթագրին ես սիրում: Կարո՞ղ ես հիշել նրա գրած հեքիաթներից մեկը և պատմել ընկերներիդ:
8. Փոքր ժամանակ, երբ դեռ կարդալ չգիտեիր, ո՞վ էր քեզ համար հեքիաթ կարդում կամ պատմում: Հիշո՞ւմ ես այդ հեքիաթները: Պատմի՛ր դրանցից մեկը:
9. Այս բաժնում դու ծանոթացար Նախադասությանը: Քեզ դուր եկա՞վ այդ ծանոթությունը: Պատմի՛ր նրա մասին:

10 Գտի՛ր քեզ ծանոթ հեքիաթների հերոսներին: Անունները գրի՛ր տետրում:

ԳԱՐՈՒՆ Է ԵԿԵԼ

1 Հանելուկ

Ամպն անձրև է թափում առատ,
Արտն աճում է ամպից արագ,
Արտն աճում է՝ աչքն արևին,
Արմատները՝ անձրևներին:

2 Հանելուկ

Շո՛գ է, տո՛թ է, շողն է կիզի՛չ,*
Նույնիսկ քամին հով չի գտնում:
Որ զովանա գոնե մի քիչ,
Արևն ինքն է ջուրը մտնում:

3 Հանելուկ

– ՈՒՇ է, ո՛ւշ է, շատ անուշ է,–
Շշնջում են երկու «Շ»:
Դաշտ ու անտառ ի՞նչ նախշում են,
ՈՒ ճերմակ է մշուշը:

4 Հանելուկ

Ձյուն է, քամի, ձյունաբուք,
Ցուրտն է դրսում շատ մրսում,
Ձնծաղիկը բարուրում*
Երազում է տա՞ք գարուն:

ԳԱՐՈՒՆ Է ԳԱԼԻՍ

Համո Սահյան

Ծիլերն են դաշտում կանաչին տալիս,
Դռները բացեք, գարուն է գալիս:

Ձմեռը հալվել, դարձել է առու,
Դարձել է առու, դարձել է վտակ,
Արաքսի հունով գնում է հեռու,
Գնում է դեպի ծովը անհատակ:

Ողջ բնությունն է հրճվանքից լալիս,
Դռները բացեք, գարուն է գալիս:

Աղբյուրներն ուրախ իրար են կանչում,
Իրար են փարվում* հովերն արթնացած,
Ծաղկունքի բույր է հողն արտաշնչում,
Մեղուն քանդում է ակնամոմը* թաց:

Երկինք ու երկիր մեզ ձայն են տալիս.
Դռները բացեք, գարուն է գալիս:

բույր

Հարցեր

1. Ինչպես է գալիս գարունը:
2. Ինչու է լալիս բնությունը:
3. Դու ինչպես ես իմանում, որ գարուն է եկել:

1 Բնագրից գտիր գետակ, արտասվել, զվարթ, գրկախառնվել, հոտ բառերին իմաստով մոտ բառեր և զույգ առ զույգ գրիր տետրում:

2 Ո՞ր բառը պետք է լինի դատարկ վագոնում.

առվով, ծիծեռնակով, ծաղկով:

3 **Փոխակերպուկ**

Ինչպես տեսար՝ բառախաղում ամեն ինչ հնարավոր է:

Եկեք թաց-ից ստանանք չոր, գետ-ից՝ ծով:

Թաց – հաց – □□□ – հով – □□□ – չոր:

Գետ – □□□ – կոտ – □□□ – ծով:

Ինչ ես կարծում՝ իսկ կյանքում հնարավոր է:

4 Գարուն, առու, ծով, հող, մեղու բառերով կազմիր բարդ կամ ածանցավոր բառեր:



ՁՈՒՐԸ

Կաս

Ձերմ արևը նայեց ծովին.
Ծովից ջուրը բարձրացավ,
Կաթիլ-կաթիլ նստեց շողին
Ու երկնքում ամպ դարձավ:

Ամպը գնաց, կանգնեց սարին,
Կայծակ տվեց, գոռգոռաց,
Ամպի ջուրը կաթիլ-կաթիլ,
Անձրև դարձած, իջավ ցած:

Ու սարերում ջրվեժ* դարձած՝
Առվակները խոսեցին,
Միանալով՝ գետեր դարձան
Ու մայր ծովը հոսեցին:

Հարցեր

1. Ինչպես է երկնքում ամպ առաջանում:
2. Ամպի ջուրն ինչպես է վերադառնում ծով:
3. Ինչի՞ մասին կարող են խոսել առվակները հանդիպելիս:

1 Ենթադրենք՝ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է գարունը: Այնպես նկարագրիր, որ հասկանա:

2 Պատմիր, թե ինչ ես տեսնում նկարում:

3 Ինչ բառեր պետք է գրել դատարկ շրջանակներում:



4 Գտիր ընդհանուր սկիզբը և վերջը:
Կազմիր բարդ բառեր և գրիր տետրում:



Առած

Ջուրն իր խամ-փան կգտնի:

ԿՈՎԱՐԱՐՆԵՐԸ

Ի. Յակովլևա

Երկնքում սահում էր մի մեծ սպիտակ ամպ: Մեկ էլ նրա դիմաց դուրս եկավ մի ուրիշ ամպ:

– Հեյ, ճամփա՛ տուր,– գոռաց առաջին ամպը:

– Դո՛ւ ճամփա տուր,– բարկացավ երկրորդ ամպը:

– Հա՛մ, դե լա՛վ: Ես հիմա քեզ ցո՛ւյց կտամ:

Եվ առաջին ամպն ուժեղ հրեց երկրորդին: Երկրորդ ամպը քիչ էր մնում ընկներ, բայց մի կերպ իրեն պահեց և, զայրույթից* սևանալով, գոռաց.

– Կռի՛վ ես ուզում անել, հիմա ես քեզ կռի՛վ ցույց կտամ:

Ու սևացա՛վ, մեծացա՛վ, թշերը ուռցրեց, հոնքերը կիտեց: 101



զայրույթ

Հարցեր

1. Ինչո՞ւ կռվեցին ամպերը:
2. Քո կարծիքով՝ ամպը կարո՞ղ է ընկնել:
3. Գուշակի՛ր՝ ի՞նչ կլինի հետո:

1 Գտի՛ր «ավելորդը»

Անձրև, ծով, գետ, առու, ձուկ, ջրվեժ:

Այդ բառով կազմի՛ր բարդ բառեր:

2

Բնագրից ընտրի՛ր միավանկ և բազմավանկ բառեր: Գրի՛ր տետրում:

3 Վանկախաղ

Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը և առանց վանկատելու գրի՛ր տետրում.



4 Երկու բառից՝ մեկ բառ

Կարմիրով գրված բառերը միացրո՛ւ կապույտով գրված բառերին և ստացի՛ր նոր բառեր.

երես, քար, ականջ, այծ, օղ, սրբիչ:

5 Հետաքրքիր է

Արևը ծովի ջուրը գոլորշացնում ու բարձրացնում է երկինք:

Ջուրը երկնքում ամպ է դառնում:

Հետո ամպի ջուրն անձրև է դառնում, թափվում գետնին ու նորից հոսում դեպի ծովը:

6 Ասա՛ մեկ բառով

Ամպի գոռոց – ....

Ամպից թափվող ջուր – ....

Պատասխան բառերով կազմի՛ր մեկ նախադասություն:

Առաջին ամպն էլ սևացավ, նա էլ հոնքերը կիտեց ու բարկացած վրա տվեց: Երկու հսկաները, գոռգոռալով, գլուխներն այնպես իրար խփեցին, որ աչքերից կայծեր դուրս թռան:

– Ա՛յ թե կայծակ է խփում: Ինչ ուժեղ են որոտում* ամպերը: Հիմա անձրև կգա,– վերև նայելով՝ ասացին մարդիկ:

Եվ իսկապես. կայծերից հետո կատաղած հաստլիկների աչքերից սկսեց արցունք հոսել: Մարդիկ գլխավերևներում բացեցին անձրևոցները*: Իսկ հաստլիկ ամպերը լալիս էին ու լալիս:

Բայց քամին ամպերին այս ու այն կողմ քշեց: Եվ ամպերն այլևս առաջվա հաստլիկները չէին: Նրանք դարձել էին փոքրիկ սպիտակ ամպիկներ:

Հարցեր

1. Ինչ պատահեց, երբ ամպերը զայրացան: Կարդա՛ այդ նախադասությունները:
2. Ինչո՞ւ ամպերը փոքրացան:
3. Դու տեսել ես ամպերի «կռիվը»: Ինչ ես անում դու այդ ժամանակ:

անշրևոց

1 Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով առաջին, երկրորդ, ամպ, երկինք, անձրևոց, կայծակ բառերը:

2 Բնագրից ընտրի՛ր հետևյալ բառերին իմաստով մոտ բառեր և գույգերով գրի՛ր տետրում.

ճանապարհ, զայրանալ, աժդահա, որոտալ, ճերմակ, արտասուք:

3 Հանելուկ

Զոր բացում եմ, թաց՝ փակում:

4 Բեմականացրեք ամպերի «կռիվը»:

5 Հիշի՛ր ծիածանի 7 գույների հերթականությունը այս նախադասության բառերի առաջին տառերի օգնությամբ.

Կարմրաթևիկը նայեց դեղնած կանաչին, երազեց կապույտ մանուշակներ:

Կ – կարմիր, ն – նարնջագույն, դ – դեղին, կ – կանաչ, ե – երկնագույն, կ – կապույտ, մ – մանուշակագույն:

6 Հանելուկ

Անձրևը, արևը լուռ ու մունջ
Կառուցեցին մի կամուրջ:

ԱՄՊԻԿԸ

Դավիթ Հովհաննես

Ես ամպիկն եմ,
Ամպ-զամպիկն եմ,
Կախարդական մի գորգ եմ,
Հազար տեսակ
գույներ ունեմ,
Ուր որ ուզեմ, կթռչեմ,
Իսկ թե չուզեմ, կմնամ
Այստեղ,
Այնտեղ,
Ուր որ կամ,
Կուզեմ՝ անձրև կդառնամ,
Կուզեմ՝ կարկուտ,
կուզեմ՝ ձյուն՝
Փաթիլ-փաթիլ ու սիրուն:
Բայց այս ամենն ինչ է որ.
Դուք հնարքներն իմ բոլոր
Դեռ չգիտեք:
Ա՛յ, տեսեք.
Ձևեր կառնեմ զանազան,
Կդառնամ մարդ
Կամ գազան.
Քիթը շատ մեծ, մազը ծուխ,
Գույնը՝ մեկ բաց, մեկ էլ թուխ*
Մի անսովոր կենդանի,
Որ քսան ոտ, հինգ գլուխ,
Տասական աչք ու ականջ
Եվ նույնքան էլ պոչ ունի:
Բա՛, ամպիկն եմ,
Ամպ-զամպիկն եմ,
Կախարդական մի գորգ եմ,
Ազատ թռչում եմ չորս կողմ,
Ոչ մի բանից վախ չունեմ:
Իսկ իմ միակ թշնամին
Այն գիժ քամին է, քամին,
Որ հենց փչեց անհոգի*
Ինձ իր թևի տակ կառնի,
Ուր որ ուզի, կտանի:

անհոգի, ձև

Հարցեր

1. Ինչ կարող է դառնալ ամպը:
2. Ինչից է վախենում ամպը: Ինչու:
3. Դու ինչի՞ ես նմանեցնում երկնքի ամպերը: Պատմի՛ր:

1 Խմբավորի՛ր

Փոխադրամիջոցները բաժանի՛ր երեք խմբի:

2 Գրի՛ր նկարում պատկերված առարկաների անվանումները: Գտի՛ր այդ բառդ բառերի բաղադրիչները:

3 Մնջախաղով ներկայացրեք ամպի և քամու երկխոսությունը:

4 Շարունակի՛ր

աչքեր – տեսնել
բերան – ուտել
լեզու – ....
ականջներ – ....
ոտքեր – ....
քիթ – ....

5 Օգտվելով բնագրից՝ շարունակի՛ր՝ ինչպիսին է ամպը.

մարդու նման, գազանի նման, մեծ քթով, ...:

ԱՐԵՎՆ ՈՒ ԾԻԱԾԱՆԸ

Վաս



Մի օր Արևն անցնում էր ծովերի, դաշտերի ու այգիների վրայով: Կակաչը, աչքերը կկոցելով, թփերի տակից նայեց Արևին ու ասաց.

– Ինչ կլինի, ինձ ներկիր:

Արևը շատ զարմացավ, որ կակաչը հայերեն գիտի ու նրան իր արյան գույնով կարմիր ներկեց:

Նարինջն ասաց.

– Ինձ էլ:

– Քո գույնը շատ լավն է, մնա՛ նարնջագույն,– ասաց Արևը:

Դեղձը դեղին ներկեց, իսկ խոտը՝ կանաչ:

Մի ծաղիկ կար, որը մոռանում էր, թե ինքն ինչ գույնի է:

– Քեզ երկնագույն եմ ներկում ու, որ չմոռանաս, անունդ Անմոռուկ եմ դնում,– նրան ասաց Արևը: Նա արդեն չէր զարմանում, որ ծաղիկները հայերեն են խոսում: Նա հասկացավ, որ դրանք Հայաստանի ծաղիկներն են:

– Ինձ էլ կապո՛ւյտ ներկիր,– խնդրեց Մանուշակը:

– Չէ՛, կապույտով ծովն եմ ներկելու, իսկ քեզ թողնում եմ մանուշակագույն,– գործը վերջացրած համարեց Արևը և մտավ ամպերի մեջ: Քիչ անց սկսեց անձրև տեղալ:

Իսկ երբ արևն ու անձրևը միանում են, ծիածան է ծնվում՝ իր յոթ գույներով՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն:

Հարցեր

1. Ինչ ծաղիկներ ներկեց Արևը:
2. Որիշ ինչ ներկեց Արևը և ինչ գույնով:
3. Ինչպես է ծնվում ծիածանը, և ինչ գույներ ունի նա:
4. Ինչ կլիներ, եթե Արևը չներկեր աշխարհը:

1 Վերականգնիր նախադասությունը.
ծիածան, արևն, միանում են, ծնվում, քամի, Երբ, ու, անձրևը, է:
Ո՞ր բառը չօգտագործեցիր:

2 Ունես գույն բառը: Բնագրից գտիր, թե արևն այդ բառով ինչ գույներ է «ստեղծել»:

3 Ինչ առարկաների գույներով կներկես քո՛ ծիածանը:

Ո՞ՒՄ ԾԱՌՆ Է

Նանսեն Միքայելյան

Տնկին* բերեց Խորենը,
Փոսը փորեց Արմենը,
Ծառը տնկեց Կարենը,
Ջուրն էլ լցրեց Սուրենը:
Տնկեցին ու հեռացան,
Գնացին ու մոռացան:
Իսկ Աշոտը խնամեց,
Ցրտից, շոգից պաշտպանեց,
Նրա ձեռքով հոգատար*
Փոքրիկ տնկին դարձավ ծառ:
Մի օր եկան ծառի մոտ
Տղաները մեր ծանոթ,
Տեսան բացված թևերը,
Առողջ բունն ու տերևը:
– Իմ տնկին է զորացել*,–
Հպարտացավ Խորենը:
– Ես եմ խորունկ փոս բացել,–
Աքլորացավ Արմենը:
– Իմ ձեռքով է ամրացել,–
Վրա բերեց Կարենը:
– Ո՞վ է նրան տիրացել,–
Ջղայնացավ Սուրենը:
Աշոտն ասաց. «Ձեր տնկին
Ի՜նձ է միայն ճանաչում,
Նրա ամեն տերևին
Իմ քրտինքն է կանաչում»:

հոգատար

Հարցեր

1. Ովքեր մասնակցեցին ծառատունկին:
2. Ո՞ՒՄ շնորհիվ փոքրիկ տնկին ծառ դարձավ:
3. Ճրբ են ծառ տնկում: Ինչո՞ւ: Դու մասնակցել ես ծառատունկի:
4. Ինչ է անհրաժեշտ, որ տնկին ծառ դառնա:
5. Քո կարծիքով՝ տղաներից ո՞վ էր իրավացի:

2 Շարունակիր

ծառ – ծառեր	տղա – տղաներ
թև –	տնկի – ....
փոս –	տերև – ....
ձեռք –	փոքրիկ – ....

1 Վերականգնիր առածը



ծառից
հեռու
չի
ընկնում:
Պտուղը

3

Բառերը դասավորիր այնպես, որ ստացվի նախադասություն.

դարձավ, Տընկին, աճեց, ծառ:

4 Հանելուկ

Շոգին՝ հագած,
Ցրտին՝ մերկ,
Մի ոտք ունի,
Հազար ձեռք:

ԱՎՈՅԻ ԾԻԼԸ

Սիլվա Կապուտիկյան

Փոքրիկ Ավոն դռան մոտիկ
Գտավ կարմիր լոբու հատիկ:

Կարմիր լոբին բերեց, ցանեց
Հողով լիքը ամանի մեջ:

Հետո նրան առատ* ջրեց,
Արևի տակ տարավ դրեց:

Անցավ մի ժամ, Ավոն եկավ,
Տեսնի՝ ծիլը դեռ դուրս չեկավ:

Եկավ կանգնեց, նայեց երկար,
Ինչքան նայեց, ոչինչ չկար:

Գնաց-եկավ ամբողջ օրը,
Այդ օրն անցավ, եկավ նորը:

Ավոն նորից նայեց երկար,
Նորից իզուր. ոչինչ չկար:

Հաջորդ օրն էլ եկավ Ավոն,
Հանկարծ կանչեց՝ հարայ տալով.

– Է-հեյ, Արեգ, Նվարդ, Ալի՛ս,
Եկեք, ծիլ է տվել լոբիս:

Ընկերները եկան շտապ,
Բայց թե ծիլը փոքր էր անչափ.

Մատիտի ծայր ասես լիներ:
Համբերություն Ավոն չուներ:

Որ մեծանա ծիլը շուտով,
Բռնեց-քաշեց երկու մատով:

Քաշեց, և ինչ... Ծիլը իսկույն
Պոկվեց, մնաց նրա ձեռքում...

Փոքրիկ Ավոն դռան մոտիկ
Լա՛ց էր լինում հատիկ-հատիկ...

Հարցեր

1. Պատմի՛ր, թե ինչպես փոքրիկ Ավոն լոբու հատիկ ցանեց:
2. Ավոն երկա՞ր սպասեց, որ լոբին ծիլ տա: Կարդա՛ այդ հատվածը:
3. Ինչո՞ւ Ավոն ծիլը քաշեց:
4. Ինչո՞ւ էր Ավոն լաց լինում:
5. Ինչ խորհուրդ կտայիր Ավոյին:

1 Մտածի՛ր, թե բառերն ինչու են այս հերթականությամբ գրված: Շարունակի՛ր շարքը՝ օգտվելով բնագրից:

Ավոն, բերեց, գտավ, դուրս, եկավ, զուր, էլի:

2 Բնագրից հերթով դուրս գրի՛ր Ավոյի կատարած գործողությունները ցույց տվող բառերը:

Գրի՛ր տետրում, որոշի՛ր հարցերը:

3 Բառերը բաժանի՛ր երկու խմբի.

հատիկ, ընկերներ, լոբի, օրեր, ծիլ, ձեռքեր, հող, մատիտներ:

4 Դո՛ւ էլ փորձի՛ր աճեցնել լոբու մի քանի հատիկ:

Բայց համբերատար եղի՛ր. Ավոյի նման չվարվես:

5 Ինչ խաղ կհորինես բնագրի այս բառերով.

անչափ, հատիկ, մոտիկ, փոքրիկ, լոբի:

ԳԱՐՈՒՆ Է ԵԿԵԼ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հիշիր այս բաժնի քեզ բոլորից շատ դուր եկած ստեղծագործությունը: Եթե բանաստեղծություն է, արտասանիր, եթե պատմվածք է, փորձիր առանց վերընթերցելու հիշել և պատմել բովանդակությունը:
2. Մի զրույց հորինիր արևի, անձրևի և ծիածանի միջև:
3. Նկարագրիր գարնան գալը: Ինչ տրամադրություն է առաջացնում այն քո մեջ:
4. Գարունն ինչ ծաղիկներ է մեզ պարգևում:
5. Գարնան որ ամիսն է քեզ շատ դուր գալիս, ինչու:
6. Գարնանն ինչ գեղեցիկ տոներ ենք նշում: Պատմիր նրանցից մեկի մասին:
7. Դու ինչպես ես շնորհավորում մայրիկիդ, տատիկիդ: Գրիր մի շնորհավորական բացիկ և նկարազարդիր:
8. Համեմատիր այս թեմայի տարբեր ստեղծագործություններում քեզ հանդիպած ամպերը:

9 Վերականգնիր նախադասությունները և ասա, թե որ բնագրերից են դրանք վերցված:

ա. երկրորդին: հրեց առաջին

Եվ ուժեղ ամպն

բ. դեղին իսկ կանաչ:

ներկեց, Դեղձը խոտը՝

10 Հորինիր մի պատմություն նկարի շուրջ:

		ա	ր	ե		ա	կ
						մ	պ
		ա	ն	ձ		և	
			ա	ռ			
ծ	ի	ա	ծ	ա			

11 Լրացրու խաչբառը: Ստացված բառերով ստեղծիր մի պատմություն:

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ





ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

Հովհաննես Թումանյան

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունի՛կ, նախշո՛ւն կաքավիկ:
Քո բույն հյուսած ծաղիկներով՝
Շուշան*, նարգիզ*, նունուֆարով*,
Քո տեղ լցված ցող* ու շաղով,
Քնես-կելնես երգ ու տաղով:
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունի՛կ, նախշո՛ւն կաքավիկ:
Քո թև փափուկ ու խատուտիկ,
Պստի կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կշորորաս ճուտիկներով:
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունի՛կ, նախշո՛ւն կաքավիկ:

բարև

Հարցեր

1. Ինչպիսի՞ն է կաքավը: Նկարագրի՛ր: Կարդա՛ բանաստեղծության համապատասխան տողերը:
2. Ինչպիսի՞ն է կաքավի բույնը: Պատմի՛ր:

1 Նկարի՛ր քեզ դուր եկած քառատողի պատկերները:

2 Ես ապրում եմ այս տանը:
Իմ ընտանիքի անդամներն են.
ես, ապրում, եմ, այս, տանը բառերը:
Հիշո՛ւմ եք, թե ով եմ ես: Քանի՞ անդամ կա իմ ընտանիքում:

3 Արևը (ի՞նչ արեց):
Կաքավը (ի՞նչ արեց):
Լրացրո՛ւ ըստ բնագրի:

4 Տուր այնպիսի՛ հարց, որի պատասխանը լինի այս նախադասությունը.
– Ո՛չ, ես դա չէի անի:

5 Քո բույն հյուսած ....՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով:
Բնագրից ընտրի՛ր բաց թողնված բառը և ընկերներիդ հետ այդ բառով խաղա՛ «բառամոցի» խաղը:

ԱՆՁՆԱՀՈՒԹՅՈՒՆ

Մի մարդ ծովով ճամփորդելիս իր հետ վերցրել էր շանը: Նավի վրա շունն անդադար վազվզում էր տիրոջ հետևից: Մի անգամ էլ այնպես անզգույշ ցատկեց, որ ընկավ ծովը:

– Շո՛ւնս, շո՛ւնս,– աղաղակեց տերը և վազեց նավապետի մոտ:

– Խնդրում եմ նավը կանգնեցնել, շունս ծովն է ընկել, փրկեցեք նրան:

– Շատ եմ ցավում, որ չեմ կարող ձեր ցանկությունը կատարել: Նավը կենդանիների համար կանգնեցնել չի կարելի:

– Իսկ եթե մարդ ընկներ ծովը,– հարցրեց շան տերը:

– Դա ուրիշ բան է,– պատասխանեց նավապետը:

Քիչ անց նավի վրա աղմուկ բարձրացավ: «Մարդ է ընկել ծովը, մարդ է ընկել»,– աղաղակում էին ամեն կողմից: Այդ մարդը շան տերն էր, որ շորերով ջուրն էր նետվել՝ իր շանը փրկելու համար: Իսկույն կանգնեցրին նավը, փրկեցին շանն էլ, տիրոջն էլ:

անդադար

Հարցեր

1. Ինչ պատահեց նավի վրա մի անգամ:
2. Ինչու՞ շան տերն իրեն գցեց ծովը:
3. Ինչու՞ է պատմվածքը կոչվում «Անձնազոհություն»:
4. Քո կարծիքով՝ եթե տերն ընկներ ծովը, ինչպես կվարվեր շունը:

1 Կարդա՛ և սովորի՛ր

Նախադասություն կազմող բառերը կոչվում են նախադասության անդամներ:

2 Շան տերն ինչպիսին չէր կարող լինել.

մարդասեր, ձկնասեր, անհավատարիմ, շնասեր:

Մնացած բառերը բաժանի՛ր բաղադրիչների և զույգ առ զույգ գրի՛ր տետրում:

3 Վանկերի բաժանի՛ր փրկել, խնդրել, ընկնել, կանգնեցնել, վերցնել, նետվել բառերը:

Ասացվածք

Լավ ընկերը նեղության ժամանակ է երևում:

4 **Հանելուկ**

Հավատարիմ ընկեր է,
Տանը պահակ ու տեր է,
Վազվզում է, չի հոգնում,
Իր տիրոջն է շատ օգնում:

ԻՆՉ ԵՆ ԽՈՍՈՒՄ ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ

Յուրի Սահակյան

Թե մրջներեն իմանայինք,
Կլսեինք մենք իրավ*՝
Ինչ են խոսում մրջյունները,
Երբ հանդիպում են իրար,
Ինչ են հարցնում,
Ինչ են լսում,
Ինչ են մաղթում մեկմեկու,
Ինչ հասցե են նրանք ճշտում
Կամ ինչ երգեր են երգում,
Ուր են գնում,
Որ ինչ բերեն,
Ինչ են խորհում մեր մասին…
Չկա մեկը,
Որ մրջներեն
Գոնե երկու բառ ասի:
Ահա կրկին
Երկու մրջյուն
Հանդիպեցին քիթ քթի…
Թե իրար հետ ինչ խոսեցին,
Ափսո՜ս, ոչ ոք չգիտի:

Մաղթել

2 **Ընտրիր մրջյուններին բնութագրող բառեր.**
աշխատասեր, բրդոտ, խելացի, համերաշխ, խայթող, թռչող, հսկա:

3 Ինչ ես տեսնում նկարում: Գրիր տետրում: Քո կարծիքով՝ ոգնին ինչու է գլխարկ դրել:

Հարցեր

1. Քո կարծիքով՝ ինչ են խոսում մրջյուններն իրար հետ:

2. Դու իմացար, որ մրջյունները խոսում են մրջներեն: Ինչ լեզվով են խոսում շները, կատուները, արջերը, մկները:

1 *Հանելուկ*

Մի պալատ կա գետնի տակ,
Ունի հազար դուռ ու բակ,
Մեջը՝ հազար կենդանի,
Բայց մի խուռն խոտ չի տանի:

4 **Բառերը գրիր համապատասխան սյունակներում.**
խնձոր, կակաչ, աթոռ, կոշիկ, տանձ, սեղան, տետր, վարդ, գլխարկ, մեխակ, ծիրան, գուլպա, բազմոց, գիրք:

Ծաղիկ	Միրգ	Հագուստ	Կահույք

Ո՞ր բառերը դուրս մնացին: Այդ բառերով կազմիր մի նախադասություն, հաշվիր անդամների քանակը:

ՈՉՆԻՆ

Էդվարդ Միլիտոնյան

Ոզնին գնաց դերձակի մոտ,
Ասաց. «Բարև՛, իմ հի՛ն ծանոթ,
Ինձ շա՛տ-շատ փող է հարկավոր.
Գնալու եմ տեղ հեռավոր:
Ասեղս ա՛ռ,
Տո՛ւր ինձ վճար»:
Ուրախացավ դերձակը ծեր.
Ոզնու ասեղ վաղուց չուներ:

Ոզնին գնաց բժշկի մոտ,
Ասաց. «Բարև՛, իմ հի՛ն ծանոթ,
Ասեղս ա՛ռ,
Տո՛ւր ինձ վճար»:
Ուրախացավ բժիշկը ծեր.
Ոզնու ասեղ վաղուց չուներ:

Ոզնին ելավ, որ ճամփորդի,
Տեսավ մի գայլ՝ շուն-շանորդի:
Մինչև բարև կտար նրան,
Գայլը թաթը դրեց վրան.
– Հիմա՛ր ոզնի, առանց փշի
Դու կդառնաս հող ու փոշի:



Համփորդել

Հարցեր

1. Ո՞Ւմ մոտ և ինչո՞ւ գնաց ոզնին:
2. Գայլն ինչո՞ւ կարողացավ թաթը դնել ոզնու վրա:
3. Ոզնին ճի՞շտ էր անում, որ իր փշերը վանառում էր:
4. Եթե հանդիպեիր ոզնուն, ի՞նչ կասեիր նրան:

3 Հանելուկ

Մի բարձի վրա՝
Շա՛տ-շատ ասեղներ,
Բայց ոչ մի ասեղ
Չես կարող թելել:

1 Հաշվի՛ր՝ քանի անդամ ունի բնագրի վերջին նախադասությունը:

4 Հորինի՛ր մի հանելուկ ոզնու մասին:

2 Ասա՛ մի քանի կենդանու անուն: Նկարագրի՛ր՝ նրանք ինչպե՞ս են պաշտպանվում:
Օրինակ: Նապաստակն արագավազ է:

5 Շարունակի՛ր և գտի՛ր ընդհանուր անվանումը:
Վարդ, կակաչ, ...:
Ճկույթ, մատանեմատ, ...:
Վերնաշապիկ, գուլպա, ...:

ԿՌՈՒՆԿԸ

Անտառապահ Սարգիսը որսորդություն շատ էր սիրում:

Աշնան մի օր նա վերևից ինչ-որ աղմուկ լսեց. թռչունների երամ էր:

«Բադերն են»,– մտածեց Սարգիսը, նշան բռնեց ու կրակեց:

Երամից մի թռչուն վայր ընկավ: Սարգիսը մոտեցավ նրան:

– Ձեռքս կոտրվեր, այս ինչ արեցի: Սա կռունկ է: Խեղճ թռչուն: Ոչինչ, սիրելիս, ես քեզ կբուժեմ,– ասաց նա և վիրավոր թռչունին տարավ տուն:

Աղջկան՝ Նազենիկին, շատ դուր եկավ կռունկը: Նա խղճաց կռունկին և սկսեց խնամել: 113

անտառապահ

Հարց

Ինչ արեց անտառապահ Սարգիսը և ինչպես ուղղեց իր սխալը:

1 Մտքում լրացրու խաչբառը: Թռչունների անունները գրիր տետրում: Ընդգծիր չվող թռչունների անունները:

				ա	ր	ա	պ
		ա	գ		ա	վ	
			բ				
ա	ղ	ա	վ		ի		
			կ		ու		

2 Լրացրու բաց թողնված տառերը և ստացված բառերը գրիր տետրում:

կ ունկ



Ստացված բառերն օգտագործելով՝ կազմիր երկու նախադասություն:

3 Շարունակիր

օր – օրեր
թռչուն – թռչուններ
նշան – ....
ձեռք – ....
աղջիկ – ....
պատ – ....
կռունկ – ....

4 Առարկա և գործողություն ցույց տվող բառերով կազմիր նախադասություններ:

Առարկա	Գործողություն
կռունկ	խղճալ
աղջիկ	թռչել
հայրիկ	կրակել
որսորդ	խնամել

Սկզբում կռունկը երկու ոտքի վրա կանգնել չէր կարողանում. վիրավոր ոտքը միշտ վեր էր պահում, երբեմն էլ հենվում էր պատին, որ չընկնի:

Նազենիկի հոգատար վերաբերմունքից կռունկը կամաց-կամաց ոտքի կանգնեց և ընտելացավ* բոլորին:

Ձմեռն անցավ: Գարնանային մի օր, երբ Նազենիկը կերակրում էր կռունկին, վերևից՝ շատ մոտ տարածությունից, լսվեց կռունկների ձայնը: Կռունկը բարձրացրեց գլուխը, երկար նայեց նրանց հետևից: Հանկարծ ուժգին թափահարեց թևերը և բարձր ճիչ արձակելով՝ թռավ:

– Թռավ, հայրիկ, թռավ կռունկը,– բացականչեց Նազենիկը: Նա գոհ էր, որ կռունկը գտավ իր ընկերներին, բայց տխուր էր, որ բաժանվեց նրանից:

հոգատար

Հարցեր

1. Ինչպե՞ս խնամեցին վիրավոր կռունկին:
2. Ի՞նչ կպատմի կռունկն իր ընկերներին:
3. Քո կարծիքով՝ անտառապահ Սարգիսը կշարունակի՞ որսորդությունը: Ինչո՞ւ:
4. Քո կարծիքով՝ Նազենիկը և կռունկը նորից կհանդիպե՞ն:

1 Կռահի՛ր՝ ինչի մասին է խոսքը:

Դա կարող է լինել սև, սպիտակ, կարմիր, մեծ, փոքր, շատ մեծ, կարող է գոռգոռալ, լացել, թռչել, թրջել:

2 Շարունակի՛ր

սիրել – ատել
վերև – ....
մոտենալ – ....
ընկնել – ....
մոտ – ....
երկար – ....
գտնել – ....
գոհ – ....
բուժվել – ....

3 Ո՞րն է «ավելորդ»: Ինչո՞ւ: Եղի՛ր ուշադիր:

Տաճատ
Նազան
կատակ
Հասմիկ

4 Սարգիս, Նազենիկ բառերը գրված են մեծատառով: Ինչո՞ւ:

5 Հիշի՛ր

Մարդկանց անունները գրվում են մեծատառով:

կռունկ

կռունկների երամ

ԲԺԻՇԿ ԱՅԲՈԼԻՏՆ ՈՒ ՆՐԱ ԳԱԶԱՆՆԵՐԸ

Կորնեյ Չուկովսկի

Եղել է, չի եղել, մի բժիշկ է եղել: Նա շատ բարի մարդ էր: Նրա անունն Այբոլիտ էր:

Բժիշկն աշխարհում ամենից շատ գազաններ էր սիրում: Նրա սենյակում նապաստակներ էին ապրում: Պահարանում ապրում էին սկյուռը և ագռավը: Ոզնին ապրում էր բազմոցին, իսկ սպիտակ մկները՝ սնդուկում*:

Բայց իր գազանների մեջ բժիշկ Այբոլիտն ամենից շատ սիրում էր Կիկա բադիկին, Ավվա շանը, փոքրիկ Խոզուկ-մոզուկին, Կարուդո թութակին և Բումբաբու բուին:

Բժիշկ Այբոլիտի մոտ աշխարհի բոլոր կողմերից գալիս էին հովիվներ, ձկնորսներ, փայտահատներ՝ իրենց կենդանիների հետ: Այբոլիտը նրանց դեղ էր տալիս, և բոլորն իսկույն առողջանում էին:

115

շկնորս

Հարցեր

1. Ո՞վ էր Այբոլիտը և ինչ էր սիրում:
2. Նրա տանն ինչ գազաններ էին ապրում և որտեղ:
3. Ինչպես էր բուժում Այբոլիտը հիվանդ կենդանիներին:

1 Բարի բժիշկը բուժում էր գազաններին: Քանի՞ անդամ ունի այս նախադասությունը: Եկեք մեկական բառ հանենք նախադասությունից:

1. Բժիշկը բուժում էր գազաններին:
2. Բարի բժիշկը բուժում էր:
3. Բարի բուժում էր գազաններին:
4. Բարի բժիշկը էր գազաններին:

Ստացված չորս տարբերակներից որոնք են նախադասություններ: Ինչու՞: Ո՞ր բառերը հանելիս նախադասությունը դարձավ անիմաստ: Հենց այդ բառերը նախադասության գլխավոր անդամներն են:

2 Բժիշկը վաղուց սովորել էր կենդանիների լեզուն:

Քո կարծիքով՝ որո՞նք են այս նախադասության գլխավոր անդամները: Ընդգծի՛ր:

3 Շարունակի՛ր

Ուսուցիչը սովորեցնում է: Զինվորը պաշտպանում է հայրենիքը:

Նկարիչը ....: Օդաչուն ....: Դերձակը ....: Խոհարարը ....: Հացթուխը ....: Բժիշկը ....:

Օրերից մի օր բժշկի մոտ եկավ մի տխուր ձի և շշուկով ասաց.

– Լամա, ոնց, ֆիֆի, կուկու…

Բժիշկն իսկույն գլխի ընկավ, որ կենդանիների լեզվով դա նշանակում է. «Աչքերս ցավում են: Խնդրում եմ ինձ ակնոց տաք»:

Բժիշկը վաղուց սովորել էր կենդանիների լեզուն: Նա ձիուն ասաց.

– Կապուկի, կանուկի…

Կենդանիների լեզվով դա նշանակում է. «Խնդրում եմ նստեք»:

Բժիշկը նրան ակնոց տվեց:

– Չակա,– ասաց ձին ու վազեց փողոց:

Բժիշկ Այբոլիտը բուժում էր բոլորին: Նրանից շուտով ակնոց ստացան վատ տեսողություն ունեցող բոլոր կենդանիները:

Անտառում՝ ծառերի վրա, շուտով այսպիսի հայտարարություն երևաց.

«Թռչուններ, գազաններ,
Բացված է բուժարան,
Բուժեցեք ցավը ձեր
Դուք առանց ուշացման»:



թռչուն

Հարց

Ձին ինչ խնդրեց բժշկից: Կարդա՛ այդ հատվածը:

1 Գիտե՞ս, որ Այբոլիտ բառը նշանակում է՝ «Ա՛խ, ցավում է»: Բժշկին նոր անուն դի՛ր հայերենով և հորինի՛ր մի պատմություն:

2 Ընկերոջդ հետ որոշե՛ք՝ ինչ կարող ե՛ք անել, և այդ մասին մի հայտարարություն գրե՛ք:

3 Դերային խաղով ընկերոջդ հետ ներկայացրո՛ւ բժիշկ Այբոլիտի և ձիու երկխոսությունը:

4 Շարունակի՛ր

Սղոց – սղոցել, նկար – ...., մեխ – ...., կրակ – ...., զանգ – ...., ծիծաղ – ....:

Ստացված բառերով կազմի՛ր միայն գլխավոր անդամներ ունեցող նախադասություններ:

Օրինակ՝ Աշոտը սղոցում է:

Գիտե՞ս՝ դու կազմել ես համառոտ նախադասություններ:

ԳԼԽԱՐԿԱՎԱՃԱՌՆ ՈՒ ԿԱՊԻԿՆԵՐԸ

Օրերից մի օր գլխարկավաճառը շուկա էր գնում՝ գլխարկներ վաճառելու: Նրա ճանապարհն անցնում էր անտառի միջով, որտեղ շատ կապիկներ էին ապրում:

Շոգ էր, և հոգնած գլխարկավաճառը ցանկացավ մի փոքր հանգստանալ: Գլխարկները դրեց գետնին, մեկն էլ՝ իր գլխին և պառկեց մի մեծ ծառի տակ ու քնեց:

Երբ արթնացավ, տեսավ, որ գլխարկներն անհետացել են:

– Որտեղ են գլխարկներս,– գոռաց նա և սկսեց ուշադիր նայել չորս կողմը: Ինչ եք կարծում՝ ինչ տեսավ:

Ծառի վրա շատ կապիկներ կային՝ յուրաքանչյուրի գլխին՝ մի գլխարկ:

– Վերադարձրեք իմ գլխարկները,– բացականչեց մարդը:

Սակայն կապիկներն ուշադրություն չդարձրին: Նրանք միայն ծիծաղում էին և գլխարկավաճառի շարժումները կրկնում:

Խեղճ մարդն այնքան զայրացավ, որ գլխից հանեց գլխարկն ու խփեց գետնին:

Եվ ինչ եք կարծում՝ ինչ պատահեց: Բոլոր կապիկները, կրկնելով նրա շարժումները, հանեցին իրենց գլխարկները և գետնին շպրտեցին: Ուրախացած գլխարկավաճառը շտապ հավաքեց գլխարկներն ու ճանապարհ ընկավ:

յուրաքանչյուր

Հարցեր

1. Անտառում ինչ պատահեց գլխարկավաճառի հետ:
2. Ինչու գլխարկավաճառն իր գլխարկը խփեց գետնին:
3. Ինչու կապիկները գլխարկները նետեցին գետնին:
4. Այս պատմության մեջ ինչն է ծիծաղելին:

2 Շարունակիր

Գլխարկ վաճառող – գլխարկավաճառ

Ճաղիկ վաճառող – ....

Տոմս վաճառող – ....

Հաց վաճառող – ....

Գիրք վաճառող – ....

1 Մնջախաղով ցույց տվեք գլխարկավաճառի և կապիկների արարքները:

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՀԱՎԸ

Ժողովրդական զրույց

Մի անգամ հավը, մեղվի վրա ծիծաղելով, ասաց.

– Ինչ անշնորհք ճանճ ես դու. ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թռչկոտում և ոչ մի բանի պետք չես գալիս:

– Իսկ դու, հավիկ-մարիկ, ինչ ես անում,– հարցրեց մեղուն:

– Միթե չգիտես, թե ինչ եմ անում: Ես քեզ նման պարապ-սարապ չեմ տզզում: Ես օրը մեկ ձու եմ ածում, մեկ ձու, գիտես՝ մեկ ձուն ինչքան է:

– Գիտեմ, գիտեմ, հասկացա: Բայց ես մինչև հիմա կարծել եմ, թե դու օրը հարյուր ձու ես ածում:

– Ինչպես կարելի է օրը հարյուր ձու ածել, անխելք մեղու:

– Ապա եթե քո ածածն ընդամենը մի ձու է, էլ ինչու ես հարյուր անգամ կչկչում, թե՝ հայ, հարայ, իմացեք, որ ձու եմ ածել: Իմ կարծիքով՝ այդքան կչկչալուն մի ձուն շատ քիչ է: Այնպես չէ՞, իմաստուն հավիկ-մարիկ:

– Բայց դու ինչ ես անում, դու, որ իմ մի ձուն քիչ ես համարում:

– Ես ինչ որ անում եմ, քեզ պես կչկչալով չեմ հայտնում ուրիշներին: Ես գլուխս կախ մեղր եմ շինում: Գիտես՝ ինչ է մեղրը: Դա հավի կերակուր չէ, քո խելքի բանը չէ, հավիկ-մարիկ:

Հարցեր

1. Ինչու՞ էր հավը ծիծաղում մեղվի վրա:
2. Մեղուն ինչից էր ենթադրել, որ հավն օրական հարյուր ձու է ածում:
3. Մեղուն ինչպես բացատրեց իր աշխատանքը:
4. Ինչն է դատապարտելի հավի արարքի մեջ:

Առած

Ուժան հավը կչկչան է լինում:

1 Համեմատիր առածի և հեքիաթի հավերը:

2 Հավն ածում է:

Լրացրու այս նախադասությունը հարցերի միջոցով.

(Ինչպիսի՞) հավն ածում է (ինչ):

Քո լրացրած բառերը կլինեն այդ նախադասության երկրորդական անդամները: Կարող ես ասել, թե ինչու:

3 Մեղուն թռչում է:

Այս համառոտ նախադասությունը լրացրու երկրորդական անդամներով:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱՊԱՍՏԱԿԸ ՄՌՆՉԱՑ

Վիլյամ Սարոյան

Երեկոյան, քնից արթնանալով, առյուծն սկսեց մռնչալ՝ արթնացնելով նույնիսկ անտառի հեռու ծայրերում քնած կենդանիներին: Արթնացավ նաև մի նապաստակ, որը, տեսնելով մյուս կենդանիներին փախչելիս ու թաքնվելիս, մտածեց. «Ինչո՞ւ պիտի առյուծն այդպես ահարկու* մռնչա, և բոլորը փախչեն ու թաքնվեն: Ի՞նչ է, չե՞մ կարող ես էլ նրա պես մռնչալ, որ մեծից փոքր սրտաճաք լինեն վախից»:

Եվ նապաստակը, թոքերը պատռելով, փորձեց առյուծի պես մռնչալ, բայց միայն ճվճվոց դուրս եկավ: Հենց այդ պահին մի սոված աղվես էր անցնում: Լսելով նապաստակի ճվճվոցը՝ նա եկավ, ճանկեց մեծամիտի գլուխը և ասաց.

– Իմացի՛ր՝ դու նապաստակ ես և ոչ թե առյուծ:

Ասաց և կերավ հիմար նապաստակին:

Հարցեր

1. Ինչո՞ւ արթնացավ նապաստակը:
2. Ինչո՞ւ էր նապաստակն ուզում առյուծի պես մռնչալ:
3. Աղվեսն ինչպե՞ս իմացավ նապաստակի տեղը:
4. Ինչի՞ հասցրեց նապաստակի մեծամտությունը:

անշնորհք

1 Շարունակի՛ր

Կապտել – կապույտ, ուրախանալ – ...., կարմրել – ...., բաղցրանալ – ...., սպիտակել – ...., փոքրանալ – ....:

2 Ո՞ր բառով պետք է լրացնել նախադասությունը (թույլ, հզոր, վախկոտ, անխելք):

Առյուծը գազանների .... թագավորն է:

3 Բնագրից առանձնացրու նապաստակին բնութագրող բառերը և ինքդ ավելացրու:

4 Հիշի՛ր

Առյուծի ձագին անվանում են **կորյուն**:

Կորյունը նաև տղայի անուն է:

5 Հիշիր այնպիսի՛ ծաղիկների անուններ, որոնք նաև մարդկանց անուններ են:

Առած

Գլխիցդ մեծ գործեր մի՛ բռնիր:

Նապաստակն ուզում էր գլխից մեծ գործ բռնել՝ մռնչալ առյուծի նման: Այդ պատճառով էլ աղվեսը նրան կերավ:

ԱՌԱՋԱԴՐՈՒՄ Է ԳԻՐՔԸ

1 Ոզնին վազում է:

Այս նախադասությունը կարելի է պատկերել այսպես.

Ոզնին | վազում | է :

Կազմիր նախադասություններ ըստ այս գծապատկերի.

| | ոզնին | վազում | է | | :



5 Հորինիր մի պատմություն նկարի շուրջ:

2 Խառնագիր

Բառի տառերը խառնվել են: Վերականգնիր բառը.

մպա, րձո, լռու, րատ, միքա, կնրա:

Այդ բառերից որն է «ավելորդ»: Գրիր այդ բառին իմաստով մոտիկ մի բառ:

6 Վերականգնիր առածը:

կօգնի:	էլ	Դու	քեզ
Աստված	քեզ	օգնիր,	

3 Արտագրիր այն տողերը, որոնց բոլոր բառերը նույն արմատն ունեն: Կիսատ տողերը շարունակիր ինքդ.

տուն, տնական, ...

քաջ, համարձակ, խիզախ, արի

գույն, գունավոր, ...

կապույտ, երկնագույն, կապտավուն

7 Ո՞ր կենդանին է «ավելորդ»: Ինչու:

4 Ո՞րն է «ավելորդ»: Ինչու:

Երկինք, ամպ, ճերմակ, ձոր, պարտեզ, կամուրջ:

Գրիր այդ բառին իմաստով մոտ մի բառ:

8 Ծույլ – մեկ վանկ:

Աշ-խա-տա-սեր – չորս վանկ:

Տեսնում ես՝ ծույլը չորս անգամ ավելին պիտի անի, որ հասնի աշխատասերին:

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՁԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է այս բաժինը կոչվում «Մեր բարեկամ կենդանիները»: Ի՞նչ կենդանիների հանդիպեցիր այս բաժնում:
2. Տանը որևէ կենդանի պահո՞ւմ ես: Եթե՝ այո, պատմի՛ր նրա մասին:
3. Քո սիրած կենդանու մասին ի՞նչ գիտես:
4. Քո սիրած կենդանու մասին հորինի՛ր հեքիաթ կամ փոքրիկ պատմվածք:
5. Հիշի՛ր, թե այս բաժնի որ բնագրից է մեջբերված հետևյալ նախադասությունը, և ի՞նչ էր այդ բնագրի վերնագիրը. «Նավի վրա շունն անդադար վազվզում էր տիրոջ հետևից»:
6. Ընկերոջդ հետ ստեղծի՛ր երկխոսություն վանդակում ապրող առյուծի և ազատության մեջ ապրող առյուծի միջև:
7. Վախկոտ նապաստակը փախչում էր սոված առյուծից:

   Յուրաքանչյուր անգամ նախադասությունից հանի՛ր մեկ երկրորդական անդամ: Վերջում ստացի՛ր միայն գլխավոր անդամներից կազմված մի նախադասություն: Ի՞նչ է կոչվում այդ նախադասությունը:
8. Խաչբառում թաքնվել են քո բարեկամ կենդանիները: Գտի՛ր նրանց և հրավիրի՛ր ժողովի:
   Այս բաժնի ո՞ր կենդանիներին դու չհրավիրեցիր ժողովի:

						ա	բ	ա	վ			
ա	ղ	վ				ս						
	ո	զ				ի						
	բ	ա										
						ռ	յ	ու	ծ			
	շ	ու										
		ծ				տ						
						ա	պ	ա	ս	տ	ա	կ
		մ				ղ	ու					
		մ				ջ	յ	ու	ն			



9 Ի՞նչ թռչունների անուններ են հատվել: Ի՞նչ տարբերություն և նմանություն կա նրանց միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է





ՄԱՍԻՍ

Վաս

Եթե Մասիս սարի ստորոտից* չափենք մինչև գագաթը, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենաբարձր սարն է:

Եթե Մասիսին նայենք հայի աչքերով, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենագեղեցիկ սարն է:

Եթե ուզենանք հասնել Մասիս սարին, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենահեռու սարն է:

Եթե աշխարհի բոլոր հայերը ցանկանան, որ Մասիսը նորից մերը լինի, ապա կլինի:



ՆՈՅԻ ՏԱՊԱՆՆ ԱՐԱՐԱՏԻ ՎՐԱ

Աստված ասաց, որ Նոյը մի մեծ տապան՝ փակ նավ, պատրաստի:

– Պիտի ջրհեղեղ անեմ,– ասաց Աստված,– մարդկանց կործանեմ: Նրանք շատ են չարացել, կռվում են իրար հետ, մոռացել են իրենց Աստծուն, մեղքեր են գործում, սուտ են խոսում, խաբում են միմյանց: Բոլոր կենդանիներից մի-մի զույգ վերցրու՛ հետդ:

Քառասուն օր ու գիշեր անձրև եկավ, և բոլոր քաղաքներն ու գյուղերը մնացին ջրի տակ: Միայն Նոյի տապանն էր, որ լողում էր ջրերի վրա: Ջրերն այնքան էին բարձրացել, որ միայն մեր Արարատի գագաթն էր ջրից վեր մնացել: Նոյի տապանը կանգ առավ Արարատ լեռան վրա: Սպասեցին, մինչև ջրերն իջան: Հետո Նոյն իր ընտանիքի հետ բոլոր կենդանիներին հանեց տապանից: Եվ բոլորը միասին սկսեցին ապրել Արարատի ստորոտում:

Ասում են՝ մինչև հիմա էլ Նոյի տապանն Արարատ լեռան վրա է: Գիտնականներն ուզում են գտնել այդ նավը:

Հարցեր

1. Ինչպես ջրհեղեղ եղավ:
2. Ինչպես փրկվեց Նոյը:
3. Աստված ինչո՞ւ էր ուզում կործանել մարդկանց:

Հիշո՞ւմ ես
Սիս + Մասիս = Արարատ

ՓԱԿ ԱՉՔԵՐՈՎ

Արմեն Շեկոյան

Կռունկների մի երամ
Թռավ, որ գա Երևան:
Ավագ կռունկը տարեց
Ներկա-բացակա արեց,
Ասաց. «Մեկը պակաս է,
Բայց չենք կարող սպասել.
Շատ երկար է մեր ճամփան,
Թող պատժվի ծույլն անբան»:
Կռունկների մի երամ
Թռավ հասավ Երևան:
Թռան հասան փոքր ու մեծ,
Տեսան՝ ընկերը իրենց՝
Այն բացակա կռունկը,
Դիմավորում է իրենց:
Ասին. «Կռո՛ւնկ հարևան,
Ինչպե՞ս մենակ, քեզուքեզ
Եկա՞ր հասար Երևան»:
Ասաց. «Կռո՛ւնկ ընկերներ,
Դուք այդ ի՞նչ եք ինձ ասում,
Իմ սիրելի քաղաքն է,
Աչքերս փակ եմ հասնում»:

Հարցեր

1. Ի՞նչ ասաց ավագ կռունկը:
2. Ինչո՞ւ կռունկը կարողացավ մենակ հասնել Երևան:
3. Երբևէ երկար ժամանակով հեռացել ես տնից: Ի՞նչ զգացիր վերադառնալիս:

1 Գիտե՞ս, որ...

Կռունկները, ծիծեռնակները, արագիլները աշնանը չվում են տաք երկրներ, իսկ ճնճղուկները՝ ոչ:

Հիշի՛ր Ծիտիկ ճնճղուկյանի նամակը:

2 մեկ կռունկ

կռունկ

շատ կռունկներ

կռունկների երամ

3 Կարդա՛ և հիշի՛ր

Թռչունների խումբ – **երամ**: Ոչխարների խումբ – **հոտ**: Կովերի խումբ – **նախիր**: Գայլերի խումբ – **ոհմակ**:

4

կռունկ
թռչուն



կռունկ
շինարարական մեքենա

5 **Կազմի՛ր նախադասություն՝ օգտագործելով հետևյալ բառերը.**

կռունկներ, աշուն, չվել, երկրներ, տաք:

Դու տեսար, որ քո կազմած նախադասությունը, բացի գլխավոր անդամներից, ունի նաև երկրորդական անդամներ: Այսինքն՝ դու կազմել ես ընդարձակ նախադասություն:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

Թուր Կեծակի

Մսրա Մելիքը սարի չափ մի հսկա էր: Նա անթիվ-անհամար զորք ուներ: Մի օր կանչում է իր զորապետերին ու ասում.

– Հավաքեք իմ ամբողջ զորքը. Սասունցի Դավթի վրա կռիվ եմ գնում:

Ու զորքն առած՝ գալիս է դեպի Հայաստան: Զորքն այնքան մեծ է լինում, որ գետերի ջուրը խմելով ցամաքեցնում է:

Լուրը գալիս հասնում է Դավթին: Դավիթը վերցնում է Թուր Կեծակին, հեծնում է Քուռկիկ Ձալալուն ու գնում Մելիքի դեմ կռվի:

Մսրա Մելիքն ասում է.

– Լավ, կռվենք, բայց առաջինը ես քեզ խփեմ:

– Համաձայն եմ,– ասում է Դավիթը: 125

Հարցեր

1. Ինչո՞ւ Դավիթը գնաց Մելիքի դեմ կռվի:
2. Քո կարծիքով՝ ինչո՞ւ Դավիթը համաձայնեց, որ առաջինը Մելիքը խփի:



1 Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:

2 Զորապետ, երազ, թուր, մայր, ձի, սյուն, Դավիթ բառերը խմբավորի՛ր ըստ ո՞վ և ի՞նչ հարցերի:

3 Որոշի՛ր՝ ի՞նչ հարցեր պետք է տալ ձի, ծերունի, կրակ, վրանները բառերին:

4 Լրացրո՛ւ նախադասությունը.
(ինչպիսի՞) Դավիթը կռվում է (ինչպե՞ս):

5 Դավթի հայրը և որդին ունեն նույն անունը: Դավթի որդու անունը Մհեր է: Ի՞նչ է Մհերի պապի անունը:

Մելիքը երեք անգամ այնպես թափով է խփում Դավթին, որ երկրաշարժ է լինում, յոթ օր ու գիշեր փոշին երկինք է բարձրանում: Բայց Դավիթը մնում է կանգնած:

Խփելու հերթը հասնում է Դավթին: Մելիքը վախից մտնում է խոր հորի մեջ, հսկայական քարերով փակում հորի բերանը: Դավիթը վերցնում է Թուր Կեծակին, հեծնում է Քուռկիկ Ձալալուն ու խփում:

– Կենդանի՛ եմ, մի անգամ էլ խփի՛ր,– գոռում է Մելիքը հորի միջից:

Դավիթը զարմանում է, ասում.

– Մելի՛ք, թափ տուր քեզ:

Մելիքը թափ է տալիս իրեն. մի կեսը մի կողմ է ընկնում, մյուս կեսը՝ մյուս կողմ: Ու շունչը փչում է:

Դավիթը Մելիքի զորքին ասում է.

– Գնացե՛ք ձեր տները:

Դավթի ահից այլևս ոչ ոք չի հարձակվում մեր երկրի վրա:

Հարցեր

1. Դավթի զարկից ինչպես է թաքնվում Մելիքը:
2. Մարա Մելիքին սպանելուց հետո Դավիթը նրա զորքը չի կոտորում: Ինչո՞ւ:
3. Ինչից է երևում, որ Մարա Մելիքը խարդախ ու խորամանկ է:
4. Քո պատկերացմամբ՝ ինչպիսին էր Դավիթը:

արշան, ոչ ոք



1 Ինչպիսին է Դավիթը, ինչպիսին է Մելիքը.

խորամանկ, ազնիվ, վախկոտ, քաջ, համարձակ, խաբեբա:

2 Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:

Սասունցի Դավթի արձանը Երևանում:

3 Գիտե՞ս, որ...

Ինչպես պատմություններն ու բանաստեղծությունները հեղինակ ունեն, այնպես էլ արձանները: Հետաքրքրվի՛ր և իմացի՛ր, թե ով է Սասունցի Դավթի արձանի հեղինակը:

ԵՐԵՎԱՆ

Վաս



– Պապիկ, ինչո՞ւ է իմ անունն Արգիշտի:
– Ես եմ դրել քո անունը:
– Իսկ քո անունն ո՞վ է դրել:
– Իմ անունն էլ իմ պապն է դրել՝ Արամը:
– Իսկ ինչո՞ւ է մեր քաղաքի անունը Երևան:
– Այդ անունը դու ես դրել, մոռացել ես:
– Ես:
– Դո՛ւ: Դու Արգիշտի հզոր թագավորն ես: Շա՛տ ու շա՛տ տարիներ առաջ դու կառուցեցիր այս քաղաքը և անունն Էրեբունի դրեցիր:
– Բա ասում ես՝ Երևան եմ դրել:
– Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան:
– Իսկ դպրոցներ կայի՞ն Էրեբունիում:
– Իհա՛րկե: Հայերս շա՛տ վաղուց գրել-կարդալ գիտեինք, ճիշտ է՝ մի քիչ այլ կերպ էինք գրում: Օրինակ, այսօրվա մեր Ա վանկը գրում էինք այսպես՝ :

127

Հարցեր

1. Ինչ էր ուզում իմանալ փոքրիկ Արգիշտին:
2. Ո՞վ էր Արգիշտի թագավորը:

1 Լրացնելով՝ կազմի՛ր բառեր և գրի՛ր տետրում.
ժամա...., ինքնա...., արևա...., լուսա...., պատու...., ձեռա....:
Բաժանի՛ր բաղադրիչների:

2 Ինչ են Երևանը, Կապանը, Գյումրին, Վանաձորը, Իջևանը, Դիլիջանը:

3 Պարզ բառերը դարձրո՛ւ բարդ բառեր և գրի՛ր տետրում.
մարդ, խաղ, ճաշ, գորգ, ձի, պապ:
Օրինակ՝ գորգ – գորգագործ:

4 Ինչն է, որ.
ա) պինդ է, ծանր, փշրվող, թափանցիկ,
բ) թեթև է, սպիտակ, փափուկ, սառը:
Այս հատկանիշներն ունեցող առարկաների վերաբերյալ կազմի՛ր հանելուկներ:

5 Առարկաների անունները գրի՛ր տետրում: Գտի՛ր դրանց ընդհանուր անվանումը բառերի այս շարքից.
Նվագարկիչ, նվագարան, տաղարան:

– Բա ինչի՞ վրա էինք գրում:
– Քարերի, կավե սալիկների:
– Իսկ Էրեբունիում պաղպաղակ կա՞ր:
– Եղած կլինի: Մեր թագավորները սառույցով, կարագով ու մրգերով պատրաստված մրգանույշ էին ուտում:
– Իսկ ի՞նչ գիտենք, որ Արգիշտին է կառուցել Երևանը:
– Այս մասին նա քարի վրա գրել է շատ տարիներ առաջ: Այդ քարը մինչև հիմա պահպանվել է:
– Ավտոմեքենաներ չկային, հեռուստացույց չկար, կինո չկար: Երևի տխուր քաղաք է եղել Էրեբունին:
– Չէ՛, ի՞նչ ես ասում: Կառքեր կային, արագավազ ձիեր կային, հեքիաթային թռչող գորգեր կային...
– Շա՛տ կուզենայի տեսնել Էրեբունի քաղաքը:
– Երևանում կա «Էրեբունի» թանգարան: Մի օր կգնանք, և դու կտեսնես, թե հայերն ինչպես են ապրել հազարավոր տարիներ առաջ:
– Պապի՛կ, գիտե՞ս, ես շատ եմ սիրում Երևանը:
– Ես էլ, չէ՞ որ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է, աշխարհի ամենամեծ քաղաքը, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

Հարցեր

1. Փորիկն ինչ իմացավ Էրեբունու մասին:
2. Դու սիրո՞ւմ ես Երևանը: Ինչո՞ւ:

1 Կազմի՛ր մեկ ընդարձակ նախադասություն՝ օգտագործելով **Երևան** բառը:

2 Ինչպիսի՞ն կուզենայիր տեսնել Երևանը: Նկարագրի՛ր:

3

Երևանում	Էրեբունիում
ավտոմեքենաներ	կառքեր
ինքնաթիռներ	ձիեր
համակարգիչներ	պարիսպներ
հեռուստացույցներ	ջրանցքներ*
զինվորներ	զինվորներ

Տեսնո՞ւմ ես՝ Էրեբունիում զինվորներ կային: Հիմա Երևանում էլ կան զինվորներ: Ինչո՞ւ, բացատրի՛ր:

4 Կարդա՛ և մտածի՛ր

Հազարավոր տարիներ առաջ ֆռ ապուպապերը կառուցել են Էրեբունի բաղաքը, որն այսօրվա Երևանն է: Լա՛վ սովորիր, մեծացի՛ր ուժեղ, շարունակի՛ր կառուցել Երևանը:

ԷՐԵԲՈՒՆԻ

– Էմի՛ն, գնա՞նք Էրեբունի:
– Գնա՛նք, Արա՛,
Բայց չգիտեմ տեղը նրա:
– Ա՛յ քեզ Էմին, դու չգիտե՞ս,
Որ հնամյա Էրեբունին
Երևանի անունն է հին:

5 Ուրիշ ինչ բառեր գիտես, որոնք սկսվում են Է-ով:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Վաս

– Հիմա կտեսնենք Սուրբ Էջմիածինը,– ասաց հայրս, երբ ամբողջ ընտանիքով հասանք Վաղարշապատ:

– Սուրբն ինչ է,– հարցրի ես:

– Էջմիածինն ինչ է,– հարցրեց փոքրիկ քույրիկս:

– Սուրբը մաքուրն է, անարատը, մեզ համար սիրելին և պաշտելին:

Քույրիկս, որ ուշադրությամբ լսում էր յուրաքանչյուր բառ, եզրակացրեց.

– Ուրեմն, մայրիկը սուրբ է:

– Իհարկե,– մեծավարի ասացի ես:

Հայրիկն ու մայրիկը ժպտացին:

– Իսկ Էջմիածինն ինչ է,– նորից հարցրեց փոքրիկ քույրիկս:

– Էջմիածինը մեր ամենագլխավոր եկեղեցին է:

– Եթե ամենագլխավոր եկեղեցին է, ինչու Երևանում չի կառուցված,– շարունակեցի ես: 129

Էջմիածին

Հարցեր

1. Ինչու է էջմիածինը համարվում սուրբ:
2. Քո կարծիքով՝ ով կամ ինչը կարող է սուրբ լինել:

1

Լրացրու պակասող վանկերը և ստացիր մարդկանց անուններ.

Ա...., Բաբ...., Գա...., Դա...., Ե...., Զո...., Է....:

Ինչու են անունները գրված այս հերթականությամբ:

2

Ինչ խաղ կարող ես հորինել այս բառերով ու տառերով: Նկարագրիր խաղը, անվանիր և լուծիր առաջադրանքը:

Կար, սար, թել, արև, տեր:

3

Բառը բառի մեջ

Բառերի մեջ գտիր ուրիշ բառեր.

Էջմիածին, թագավոր, Վաղարշապատ:

4

Կարդա՛, որ իմանաս

Հայաստանում կառուցվել են հազարավոր եկեղեցիներ: Վերջերս Երևանի կենտրոնում կառուցվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին:

5

Պատասխանը հարցի մեջ

Ո՞Ր գնաց Սարգիսը:

Ոլոր ճամփին ինչ տեսավ նա:

Քանի՞ պտույտ տվեց Սարգիսը:

Ե՞րբ հասավ խանութին:

Օրինակ: Ինչ ապրանք հավանեց Սարգիսը: Պատասխան՝ հավ:

– Որովհետև եկեղեցին կառուցելու տեղը ցույց է տվել Քրիստոսը: Նա, մի ոսկե մուրճ ձեռքին, կրակե սյան միջով, իջել է երկնքից և ասել, որ հենց այստեղ կառուցեն եկեղեցին,– բացատրեց հայրիկը:

– Իսկ «Էջմիածին» նշանակում է, որ միածինը, այսինքն՝ Քրիստոսը, իջավ,– ասաց մայրիկը:

– Հենց Քրիստոնն է կառուցել մեր Սուրբ Էջմիածինը,– արդեն հիացած հարցրեց քույրիկս:

– Ո՛չ, կառուցել է մեր շատ խելացի ու հզոր Տրդատ թագավորը: Մասիս սարից հսկայական քարեր դրած թևերի տակ՝ բերել է, և վարպետները շարել են,– ասաց հայրիկը:

– Եվ հենց Էջմիածնում էլ հետագայում Մեսրոպ Մաշտոցը բացել է հայկական առաջին դպրոցները,– շարունակեց մայրիկը:

– Մենք շրջեցինք Էջմիածնի տաճարի տարածքում, հիացանք ու զարմացանք և ոգևորված վերադարձանք տուն:



Հարցեր

1. Ինչպե՞ս իմացան եկեղեցին կառուցելու տեղը:
2. Էջմիածնում ի՞նչ նշանավոր գործ է կատարել Մեսրոպ Մաշտոցը:

Արդյոք, ոգևորվել

1 Էջմիածինը մեր գլխավոր եկեղեցին է

Եկեղեցին կառուցելու տեղը ցույց է տվել Քրիստոսը

Արտագրի՛ր նախադասությունները և կետադրի՛ր:

2 Քրիստոսն իջավ համառոտ նախադասությունը դարձրու ընդարձակ նախադասություն:

3 Շարունակի՛ր

բառ – բառեր
ակնոց – ակնոցներ
քար – ....
աղջիկ – ....
տղա – ....

4 Խմբավորի՛ր

Բառերն առանձնացրու երկու խմբով և գրի՛ր տետրում.

Էջմիածին, Տրդատ, Մասիս, Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Վաղարշապատ:

ԼԱՎԱՇԸ

Հայկ Խաչատրյան

Մի հնդիկ իշխան երկար ճանապարհ էր կտրել և Հնդկաստանից եկել հասել հայոց հին մայրաքաղաք Դվին: Նա զարմացած շրջում էր հայկական շուկայում և արհեստավորների տներում: Դվինում նրան շատ բան դուր եկավ: Բայց ամենից շատ հիացրեց լավաշը: Նա չէր կարծում, թե աշխարհում կարող է այդքան բարակ ու այդքան համեղ հաց լինել:

Մի անգամ հնդիկը գնաց շուկայի հացթուխի մոտ ու ասաց.

– Բարեկամ, ձեր այս լավաշը քանի՞ օրվա կյանք ունի: 131

Հարց

Ի՞նչ էր անում հնդիկ իշխանը Հայաստանում:

1

Ո՞ր բառերը պետք է դնել նախադասության մեջ (եփում են, թխում են, պատրաստում են):

Հայկական լավաշը .... թոնրի մեջ:

Համառոտի՛ր ստացված նախադասությունը:

2 Ն կ ա ր ի շուրջ կազմի՛ր մեկ ընդարձակ նախադասություն:

3

Համակարգիչը «թաթնվել է» այս բառերի մեջ: Գտի՛ր:

Հաշվել, ավելացնել, մեկ, առանձնացնել, կիսել, անջատել, որպե, գումարել, ինը, չափել:

4

Կարդա՛ և սովորի՛ր

Քարից հաց համել նշանակում է ծանր աշխատանքով, մեծ շարշարանքով ապրուստ ճարել:

5

Փոխակերպում

Տե՛ս, թե ինչպես, բառի մեջ մի-մի տառ փոխելով, հայ-ից ստանում ենք շատ.

հայ – հատ – շատ:

Այժմ դու՛ քար-ից ստացիր հաց.

քար – □□□ – լաց – հաց:

6

Շարունակի՛ր

Սարեր – Արարատ, Արագած:

Գետեր – Հրազդան, Ազատ:

Ծաղիկներ – մեխակ, ..., ...:

Պտուղներ – տանձ, ..., ...:

Կենդանիներ – ձի, ..., ...:

7 **Հանելուկ**

Ինչքան կարդաս՝ էջ ունի,
Ինչքան խաղաս՝ խաղ ունի,
Ինչքան ուզես՝ ֆեզ կօգնի,
Ի՛նքը երբեք չի հոգնի:

– Ինչքան պահես, կմնա,– պատասխանեց հացթուխը,– թարմությունը պահում է հինգ-վեց ամիս, նույնիսկ մինչև մեկ տարի:

– Հավատալս չի գալիս:

– Իզուր:

– Լսիր, բարեկամ, վերցրու այս փողը և հարյուր լավաշ տուր ինձ, ես պիտի փորձեմ քո ասածը:

Հնդիկը Դվինում մնաց վեց ամիս և, փորձելով իր գնած լավաշների համը, համոզվեց, որ հայկական լավաշը շատ երկար ժամանակ կարող է մնալ առանց փչանալու: Նա ևս հինգ հարյուր հատ լավաշ գնեց ու հետը տարավ Հնդկաստան:



Հարցեր

1. Ինչ էր ուզում փորձել հնդիկը և ինչու վեց ամիս էլ մնաց Դվինում:
2. Քո կարծիքով՝ հայկական լավաշն ինչու է երկար դիմանում:

1 Մնջախաղով ցույց տուր, թե ինչպես են թխում լավաշը:

2 Դու իմացար, որ այսպիսին է լավաշը. բարակ, համեղ, անուշաբույր, փափուկ:

Կազմիր այս բառերի առաջին վանկերով սկսվող նոր բառեր: Օրինակ՝ բարակ – բարի, բարեկամ, բանաստեղծ, բանակ:

3 Նկարելուկներ



Օրինակ՝ կարմիր Կ + այծ = կարմիր կայծ:

4 Հացը մեծ բարիք է: Դու ինչպես ես վերաբերվում հացին:

5 Օգտվելով բնագրից՝ լրացրու բաց թողնված բառերը:

Հնդիկ իշխանը շրջում □ շուկայում:

Նա □ կարծում, թե կարող □ այսքան համեղ հաց լինել:

6 Լրացրու բաց թողնված բառերը:

Հնդիկ իշխանը (ինչ էր անում) շուկայում:

Հացթուխը (ինչ էր անում) շուկայում:

Հայկական լավաշը շատ երկար ժամանակ (ինչ չի լինում):

7 Հացի մասին ասել են

- Հաց ու թան ունես՝ ամեն բան ունես:
- Ուրիշի հացով փոր չի կշտանա:

ԳԵՂԱՐԴ

Վաս



Ազատ գետի ափին՝ խոր ձորի մեջ, ժայռերի արանքում, կանգնած է Գեղարդի վանքը: Ներս ես մտնում ժայռափոր* եկեղեցին և ապշում. հսկայական եկեղեցին քանդակված է ընդամենը մեկ քարից: Զարմանալի է: Ո՞վ է կառուցել և ինչպե՞ս:

Շատ տարիներ առաջ մի հայ իշխան ցանկանում է եկեղեցի կառուցել այդ ձորում: Բայց չի իմանում, թե որտեղ: Երազում իշխանին մի ծերունի ասում է, որ նա եկեղեցին կառուցի այնտեղ, որտեղ ինքը կդնի քարհատի* մուրճը:

Արթնանալով՝ իշխանը տեսնում է, որ մի բարձր ժայռի կատարին քարհատի մուրճ է դրված: Զարմանում է իշխանը. ժայռի վրա ինչպե՞ս եկեղեցի կառուցի: Հետո բարձրանում է ժայռի վրա և քարագործ վարպետ Գալձագի հետ սկսում փորել: Նեղ անցք բացելով ժայռի կատարին՝ փորում են ամբողջ ժայռի ներսը և քանդակում եկեղեցին:

Եթե դուք էլ գնաք ու տեսնեք, շատ կզարմանաք և կհիանաք:

Հարցեր

1. Որտե՞ղ է գտնվում Գեղարդի վանքը:
2. Հայ իշխանն ինչպե՞ս է իմանում, թե որտեղ կառուցի եկեղեցին:
3. Ինչպե՞ս են կառուցում ժայռափոր եկեղեցին:
4. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է զարմանալի Գեղարդի վանքը:

1

Խառնագիր

Բառերի տառերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը.

ոմմ, ազգն, աչխ, քանվ, ակնր:

Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով ստացված բառերը:

2

Կազմի՛ր մեկ նախադասություն՝ օգտագործելով հետևյալ բառերը.

գետ, վանք, է, Ազատ, Գեղարդ, ափ:

3

Ի՞նչը չկա նկարում.

խաչքար, խոյակ, զանգ, մոմ, խաչ, եկեղեցի:



ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ*

Վաս

Փոքրիկ Գոռն ու Ծովինարը, բազմոցին պառկած, երաժշտություն էին լսում:

– Ո՞վ է ապրում մեզնից վերև,– հարցրեց Գոռը:
– Սահակենք,– պատասխանեց Ծովինարը:
– Իսկ Սահակենցից վերև՞ ինչ կա:
– Նրանցից վերև արդեն շենքի տանիքն է:
– Իսկ տանիքից վերև՞:
– Օդում թռչող ծիտիկները:
– Իսկ ծիտիկներից վերև՞:
– Ինքնաթիռները:
– Ինքնաթիռներից վերև՞:
– Ամպերը:
– Ամպերից վերև՞:
– Արևը:
– Արևից այն կողմ:
– Աստղերը:
– Աստղերն ինչ են:
– Հեռու, հեռու արևներ են, այնքան հեռու, որ շատ փոքր են երևում, թեև աստղերից շատերն Արևից էլ մեծ են: **134**

✍ *վերև, արև*

☺ *Խնդուկ*

– Մայրիկ, արևը ձեռքեր ունի:
– Ինչու՞ ես հարցնում, տղա՛ ջան:
– Տատիկն ասաց. «Արևի տակ շատ մի՛ խաղա. գլխիդ կխփի»:

Հարցեր

1. Թվի՛ր՝ ինչ կա ամպերից վերև:
2. Ինչու՞ են աստղերը փոքր երևում:

1 Բառերը գրի՛ր համապատասխան սյունակներում.

սղոց, արև, լամպ, աքցան, լուսին, ինքնաթիռ, ջութակ, լապտեր, աստղ, մոմ, գնացք, ռանդա, հեծանիվ, զուռնա, նավ, կիթառ, ունելի, դուդուկ, մուրճ, դաշնամուր, ավտոմեքենա:

Լուսատուներ	Փոխադրամիջոցներ	Գործիքներ	Նվագարաններ

2 ա. Գրի՛ր փոխադրամիջոցների անունները:

բ. Ամենաարագ սլացող առարկայի անունով կազմի՛ր մի համառոտ նախադասություն:

– Մենք կարող ենք հասնել աստղերին:

– Եթե նստենք այսօրվա ամենաարագ սլացող աստղանավը* և գնանք, գնանք մինչև տատիկ ու պապիկ դառնալը, դարձյալ չենք հասնի նրանց:

– Իսկ կարող ենք հաշվել, թե քանի աստղ կա երկնքում:

– Դա հաշվում են աստղադիտարանում: Հիշում ես՝ ամռանը բարձրացանք Արագած սարը: Արագածի լանջին մի գեղեցիկ լիճ կար: Ներքևում Բյուրականի աստղադիտարանն էր: 135

Հարց

Որտեղ է մեր աստղադիտարանը:
Ինչ են անում այնտեղ:

1 **Բառքամոցի**

Աստղադիտարան բառի տառերով կազմիր նոր բառեր:

Ներքև

2 Վանկերի բաժանիր հետևյալ բառերը.
աստղ, տանիք, վերև, ինքնաթիռ, աստղանավ, երաժշտություն:
Հիշիր անտեսանելի գլխարկով ը-ին:

3 Ինչը կարող է երկար լինել՝ պարանը, ճանապարհը, ...:
Ինչն է վերևում՝ արևը, ...:

4 *Հանելուկ*

Երբ ցերեկ է,
Աչքը մեկ է:
Եկավ գիշեր՝
Աչքեր ունի
Հազար ու մի:



5 Հորինիր մի պատմություն նկարի շուրջ:

6 Նկարիր մի աստղանավ, որի նավապետը դու ես և թռչում ես դեպի աստղերը:

7 Արտագրիր նախադասությունները: Եթե նախադասությունը ճիշտ է, դիմացը գրիր 1, եթե սխալ է՝ 0:
Համեմատիր ընկերոջդ գրածի հետ:

Հայերենում կա 6 ձայնավոր հնչյուն:

Նախադասության վերջում դնում են շեշտ:

Սեղան-ը միավանկ բառ է:

Մարդիկ երեկոյան նախաճաշում են:

Մարդկանց անունները գրում են մեծատառով:

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է:

– Հիշում եմ: Նայեցինք աստղադիտակով: Աստղերը շատ մոտիկ էին երևում:

– Ճիշտ է: Գիտնականները նայում են աստղերին ու որոշում նրանց ջերմաստիճանը: Որոշում են, թե երբ են ծնվել այդ աստղերը, անուն են դնում նրանց:

Արեգակը նույնպես աստղ է: Իսկ Երկիրը, որի վրա մենք ապրում ենք, Արեգակի մոլորակն* է: Գիտնականները փորձում են իմանալ՝ արդյոք կան ուրիշ մոլորակներ, որոնց վրա նույնպես մարդիկ են ապրում:

Բյուրականի աստղադիտարանում աշխատում են շատ խելացի մարդիկ: Բայց նրանք էլ դեռ չգիտեն, թե ինչպես հասնեն աստղերին: Այնպես որ՝ լավ սովորիր, մեծացիր. գուցե դու պարզես, թե ինչպես հասնենք աստղերին...

արդյոք

Հարցեր

1. Երբ նայում ես աստղերին, ինչ ես մտածում:
2. Քո կարծիքով՝ այլ մոլորակների վրա կան կենդանի արարածներ: Ըստ քեզ՝ ինչպիսին են այլմոլորակայինները:

4 **Շարունակիր**

Հիմա	Հետո
ուտում եմ	կուտեմ
խմում եմ	կխմեմ
վազում եմ	....
երգում եմ	....

1 **Փոխակերպում**

Մի-մի տառ փոխելով՝ արև-ից ստանանք այգ.

արև – արտ – այտ – այգ:

Այժմ դու ջուր-ից ստացիր գետ.

ջուր – ս□ր – □□□ – գեր – գետ:

5 Գտիր «ավելորդը»

2 **Հանելուկ**

Գիշերը ծաղկում են, ցերեկը՝ թառամում:

3 Նկարելուկներ





Նկարները գրիր բառերով և լուծիր:

6 Գտած առարկայի անունով կազմիր մի ընդարձակ նախադասություն:

7 **Հետաքրքիր է**

Մենք ապրում ենք Երկիր մոլորակի վրա, որն ուրիշ ութ մոլորակների հետ պտտվում է Արեգակի շուրջը:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ

Վաս

Ջրհեղեղից հետո Նոյն իր ընտանիքի հետ իջավ Արարատից և սկսեց ապրել Արարատյան դաշտում: Այդ ժամանակներից մինչև հիմա Արարատը մեր սուրբ լեռն է: Եվ այդ օրվանից մինչև հիմա մենք՝ հայերս, ապրում ենք Հայաստանում՝ մեր հայրենիքում: Մեր հայրենիքը և մեզ պաշտպանում է մեր բանակը:

Նոյի թոռներից էր Հայկը՝ մեր նահապետը*: Հայկ Նահապետը կռվում է թշնամի Բելի դեմ, որն ուզում էր մեծաթիվ զորքով գրավել մեր հայրենիքը: Ահեղ* մարտում Հայկն սպանում է Բելին, և Բելի զորքը փախչում է:



Արգիշտին հզոր թագավոր էր: Նա բազմաթիվ պատերազմներ է մղել թշնամիների դեմ ու հաղթել: Արգիշտին ստեղծել է մեծ հայրենիք, կառուցել է շատ քաղաքներ, բերդեր, ջրանցքներ: Նա է կառուցել Երեբունի քաղաքը, որը մեր այսօրվա մայրաքաղաք Երևանն է:

Տիգրան Մեծը ևս հայ հզոր թագավորներից էր ու մեծ զորավար: Նա ապրել է մոտ երկու հազար տարի առաջ: Տիգրանը քաջ էր և իմաստուն, ստեղծել էր ուժեղ բանակ: Նրա շնորհիվ Հայաստանը շատ մեծ էր ու հզոր:

Վարդան Մամիկոնյանը հայոց զորավար էր: Մի անգամ թշնամին մեծաթիվ զորքով հարձակվել էր Հայաստանի վրա: Ուզում էր ավերել մեր հայրենիքը, վերացնել մեր լեզուն՝ հայերենը, կործանել մեր հավատը: Քաջ Վարդանն իր փոքրաթիվ զորքով դուրս եկավ թշնամու դեմ, կռվեց և զոհվեց, բայց Հայաստանը փրկվեց:

Մոտ իննսուն տարի առաջ թշնամին հարձակվել էր մեր հայրենիքի վրա և առաջ էր շարժվում դեպի Երևան: Հայերը միավորվեցին և Սարդարապատի մոտ հաղթեցին ահեղ թշնամուն:

Այժմ Սարդարապատում հուշարձան է կառուցվել՝ նվիրված այդ ճակատամարտին:

...Մոտ քսան տարի առաջ ահեղ կռիվներով թշնամու ձեռքից ազատագրեցինք մեր հայրենիքի մի մասը՝ Արցախը:

Բազմաթիվ հայ հերոսներ ծնվեցին այդ պատերազմում, որոնք առյուծի նման կռվեցին և հաղթեցին թշնամուն:

Սիրելի՛ երեխաներ, հին ժամանակներում մեր բանակը զինված էր նիզակներով, նետ ու աղեղներով, իսկ այսօր զինված է ամենահզոր զենքերով՝ հրթիռներով, ինքնաթիռներով, տանկերով: Դուք էլ պետք է լավ սովորեք, քաջ ու հայրենասեր լինեք, որ կարողանաք և՛ շենացնել, և՛ պաշտպանել մեր Հայրենիքը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայաստանի ո՞ր տեսարժան վայրերի մասին տեղեկացար: Պատմի՛ր:
2. Հայ ժողովրդի պատմական անցյալին վերաբերող ի՞նչ տեղեկություններ մտապահեցիր:
3. Ինչպե՞ս ես պատկերացնում հին ու նոր Երևանը: Նկարագրի՛ր:
4. Փորձի՛ր նկարել քեզ դուր եկած դասանյութի որևէ հատված, պատմի՛ր նկարի բովանդակությունը: Համեմատի՛ր բնագրի տվյալ հատվածի հետ. ի՞նչն է նման, ի՞նչը՝ տարբեր:
5. Ի՞նչ կուզեիր ասել Սասունցի Դավթին: Մի նամա՛կ գրի՛ր նրան:
6. Ինչպիսի՞ն կուզեիր տեսնել հայրենիքդ շատ տարիներ հետո: Պատմի՛ր:
7. Ո՞ր հերոսները կամ նրանց արարքները հպարտություն արթնացրին քո մեջ:
8. Գրի՛ր մի շարադրություն «Սիրում եմ քեզ, ի՛մ հայրենիք» վերնագրով:
9. Գիտունիկն Անգետիկին օդապարիկով ուղարկում է բժիշկ Այբոլիտի մոտ, որ նա գա և բուժի հիվանդ կապիկին: Ահա նրանց նամակը.

Կենդանիների՛ բարեկամ, մեր շատ սիրելի բժիշկ Այբոլի՛տ, չարաբեթի կապիկը ծանր հիվանդ է:

Օդապարիկը չբարձրացավ օդ, որովհետև նամակը ծանր էր: Գիտունիկն առաջարկեց նամակում թողնել երեք բառ: Սակայն Անգետիկի և Գիտունիկի առաջարկած երեք բառերը տարբեր էին:

Քո կարծիքով՝ ո՞ր երեք բառերը պետք է թողնել, որ բժիշկ Այբոլիտը գա:

Ինչպիսի՞ նախադասություն ստացար:

ԱՇԽԱՐՀՆ ԷԼ ՄԻ ՀԵՔԻԱԹ Է



ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Հովհաննես Թումանյան

Ես ապրում էի մի փոքր տան մեջ՝
Առատ ու անփույթ*,
Աշխարհն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղևը՝ կապույտ:

Նրանից հետո աչքս բաց արի
Մի փոքր բնում,
Տեսա՝ աշխարհը հարդից* է շինած,
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բնից գլուխս հանած,
Նայում եմ դես-դեն,
Տեսնեմ՝ աշխարհը տերևից շինած,
Մեր բունը՝ վրեն:

Հիմի թռչում եմ հեռու, շատ հեռու,
Ամեն տեղ գնում,
Բայց թե աշխարհը ինչից է շինած՝
Էլ չեմ հասկանում:

Հարցեր

1. Բնագրից ընտրիր և կարդա հետևյալ հարցերի պատասխանները.

ա. Մինչև «աչքը բաց անելը» որտեղ էր ապրում թռչունը:

բ. Ինչն անհասկանալի մնաց թռչունի համար:

2. Ինչու էր աշխարհն անընդհատ փոփոխվում թռչունի համար:

կեղև, անվերջ

3 Շարունակիր

Ես ապրում [եմ] :

Դու ապրում [ ] :

Նա ապրում [ ] :

1 Բնագրից գտիր այն առարկաները, որոնց վերագրված են այս հատկանիշները.

առատ, անփույթ, փոքր, կլոր, կապույտ:

4 Կռահիր՝ ինչ է պատմում մեր բանաստեղծության հերոս ծիտիկն իր ընկերոջը:

2 Եթե դու ստեղծեիր աշխարհը, ինչպիսին կլիներ այն: Նկարագրիր:

5 Բնագրից գտիր այն բառը, որը կրկնվում է բոլոր քառատողերում: Այդ բառով կազմիր նախադասություններ:

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Կաս

Քայլում էի փողոցով,
Մեկ էլ տեսա մի մեծ օձ:
«Չկա քեզնից վախեցող,–
Մտածեցի,– ձո՛ղ ես, ձո՛ղ»:
Բայց երբ «ձողը» շարժվեց,
Մտածեցի՝ լավ չեղավ:
«Տեսնես ի՞նչը լավ չեղավ»,–
Մտածեցի ես արագ,
Մտածեցի ես երկար,
Մտածեցի ես բարակ,
Մտածեցի ու անցա…
Մտածելը մոռացա:
«Տեսնես ի՞նչը մոռացա»,–
Հարց տվեցի ինքս ինձ:
«Սուտ ասելը մոռացար»,–
Պատասխանեց մի բրինձ.
Թեև խոսեց չինարեն,
Բայց հասկացա ես իրեն:
Օձը սիրուն թամբեցի,*
Դարձավ թռչող մի լավ ձի:
Բրինձն առած իմ ուսին
Թռա հասա ես լուսին:
Բրինձն այնտեղ ցանեցի,
Հետո թելեր մանեցի,
Ամուր պարան հյուսեցի:
Ներքև իջանք ես ու ձին,
Ամեն մեկս առանձին:

թեև

Հարցեր

1. Ի՞նչ էր անում հերոսը, ի՞նչ տեսավ և ի՞նչ մտածեց:
2. Ի՞նչը մոռացավ հերոսը և ո՞վ օգնեց նրան: Կարդա՛ համապատասխան տողերը:
3. Օձն ինչպե՞ս դարձավ ձի:
4. Սուտասելուկի մեջ ի՞նչը կարող էր իրական լինել:

1 Արտագրի՛ր տետրում: Եթե նախադասություն է, կողքին դի՛ր 1, եթե նախադասություն չէ՝ 0:

Ես քայլում էի:
Մենք լուսին հասանք թռանք:
Հեղինակը պատմում է:
Ես ներքև ու իջանք ձին:
Նախադասություններն ընդարձակի՛ր:

2 Խառնագիր

Վերականգնի՛ր բառերը և դրանցով կազմիր այնպիսի՛ նախադասություններ, որ ետփած հավի ծիծաղը գա.

լվա, ագրա, ռակեր, բրկաա, տսու, ուրնիս:

Օրինակ: Արջն ունի բարակ ոտքեր և արագ ականջներ:

ԵՍ

Վիլյամ Սարոյան

Վաղուց, շատ վաղուց աշխարհում միայն մի բառ կար՝ ես:

Եթե մեկնումեկն ուզում էր ասել. «Բարև՛, ես եմ», ուղղակի ասում էր՝ ես: Եթե ուզում էր ասել. «Ինձ մի նարինջ տուր», կամ. «Ինչ գեղեցիկ ծառ է», «Ծիտիկը ծլվլում է», դարձյալ միայն մի բառ էր ասում՝ ես:

Դա միակ բառն էր աշխարհում:

Մարդկանց մի մասն ուղղակի գոռում էր այդ բառը, մյուսները շշուկով էին ասում, մի քանիսը՝ լացով, ոմանք էլ՝ ծիծաղելով. չէ՞ որ դա մարդկանց միակ բառն էր:

Մի օր էլ մարդկանց գլուխն սկսեց ցավել անընդհատ ես-ես-ես-ես-ես ասելուց-լսելուց: Գլխացավից ու ձանձրույթից ազատվելու համար նրանք շատ էին ուզում մի նոր բառ հորինել: 143



ուղղակի

Հարցեր

1. Բնագրից ընտրիր և կարդա՛ հետևյալ հարցերի պատասխանները.

«Ո՞րն էր միակ բառն աշխարհում» և «Մարդիկ ինչպե՞ս էին հաղորդակցվում»:

2. Ինչո՞ւ մարդիկ որոշեցին նոր բառ հորինել:

3. Եթե դու հորինեիր առաջին բառը, ապա ո՞ր բառը կհորինեիր: Ինչո՞ւ:

3 Շարունակիր

Ես սիրում եմ, երբ....
Ես հպարտ եմ, որ....
Ես ուրախ եմ, որովհետև....
Ես հուզվում եմ, երբ....
Ես զարմանում եմ, երբ....

1 Նկարագրիր այն մարդու տրամադրությունը, որը՝
ա. միայնակ է,
բ. շրջապատված է բարեկամներով և ընկերներով:

2 Մրցույթ դասարանում

Ծիտիկը ծլվլում է համառոտ նախադասությունը դարձրեք ընդարձակ նախադասություն՝ ավելացնելով երկրորդական անդամներ:

Ո՞Ւմ նախադասությունն ավելի շատ անդամներ ունեցավ:

4 Հորինիր մի պատմություն նկարի շուրջ:

Վերջապես մի մարդ, որի գլուխն ամենից շատ էր ցավում ես ասելուց, գտավ այդ նոր բառը: Կեսգիշերին արթնանալով՝ նա, ինչքան ուժ ուներ, գոռաց՝ դո՛ւ: Հաջորդ առավոտ աշխարհում արդեն մի նոր բառ կար՝ դու:

Եվ եթե կան ես-ն ու դու-ն, ինչո՞ւ չլինեն իմ-ն ու քո-ն, եթե կա ոչ-ը, ինչո՞ւ չլինի այո-ն, եթե կա տաք-ը, ինչո՞ւ չլինեն սառը, կոշտ-ն ու փափուկ-ը, մոտիկ-ն ու հեռու-ն, թաց-ն ու չոր-ը, սխալ-ն ու ճիշտ-ը, լույս-ն ու խավար-ը, սև-ն ու սպիտակ-ը:

Այսպես մարդիկ սկսեցին իրար հետ խոսել, հարցեր տալ ու պատասխանել և մտածել, թե ինչ բան է այս աշխարհը:

Եվ մինչև հիմա էլ փնտրում են այդ հարցի պատասխանը:

սև

Հարցեր

1. Մարդիկ մինչև հիմա ո՞ր հարցի պատասխանն են փնտրում: Իսկ դու գիտե՞ս այդ հարցի պատասխանը:
2. Ո՞ւրիշ ո՞ր ստեղծագործության հերոսն էր փնտրում նույն հարցի պատասխանը:
3. Մայրիկին կամ հայրիկին հարցրո՛ւ, թե որն է եղել քո ասած առաջին բառը:

1 Ո՞րն է «ավելորդ»: Ինչո՞ւ:
ես, դու, մենք, նա:
Թեև քո գտած բառն «ավելորդ» էր, սակայն, ինչպես գիտես՝
ես + դու + նա = մենք:

2 Բնագրից դո՛ւրս գրիր իմաստով հակառակ բառազույգերը:

3 Ո՞ր բառերն են «ընկերներ».
միրգ, կավիճ, ծառ, գրատախտակ, թուղթ, ձյուն, դահուկ, տետր:
Օրինակ՝ միրգ – ծառ:

4 Գտի՛ր «ավելորդը».
լավաշ, գաթա, պանիր, բլիթ, տորթ:
Թվի՛ր այդ բառի «ընկերներին»:

5 Վանկերի բաժանի՛ր պտտել, փռվել, ծռվել, ծիծաղել, գլուխ բառերը:

6 Կազմի՛ր երկու նախադասություն, որոնց մեջ լինեն **ես** և **դու** բառերը:

7 Բառքամոցի
Պատասխան բառի տառերով կազմի՛ր նոր բառեր:

ՈՉ ՄԻ ԲԱՆԻՑ ՄԱՐԴՈՒԿԸ

Զանի Ռոդարի

Լինում է, չի լինում՝ ոչ մի բանից մի մարդուկ է լինում: Ոչ մի բանից մարդուկ: Այո, նրա քիթն էլ էր ոչ մի բանից, բերանն էլ: Հագին բան չկար, կոշիկներն էլ ոչ մի բանից էին:

Մի օր մարդուկը քայլում է ճանապարհով, որ ոչ մի տեղ չէր տանում, և հանդիպում է ոչ մի բանից մկնիկի:

– Լսիր,– ասում է մարդուկը,– դու կատուներից չե՞ս վախենում:

– Ո՛չ,– պատասխանում է մկնիկը:– Այս երկրում կատուներն էլ են ոչ մի բանից, նրանց բեղերն էլ, ճանկերն էլ: Իսկ ես պանիր եմ սիրում: Ես ուտում եմ միայն անցքերը: Ճիշտ է, նրանք հոտ չունեն, բայց քաղցր են:

145

Հարցեր

1. Ինչպիսի՞ն էր ոչ մի բանից մարդուկը:
2. Ինչո՞ւ մկնիկը կատվից չէր վախենում:

1 Ի՞նչ խաղ կարող ես հորինել այս բառերով և f տառով: Նկարագրի՛ր և լուծի՛ր:
Գնաց, սան, գիր, տարի, բարի, այլ:

2 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

3 Գտի՛ր «ավելորդը».
մածուն, հաց, պանիր, թթվասեր, կարագ:
Թվի՛ր այդ բառի «ընկերներին»:

4 Քո կարծիքով՝ ո՞րն է այս պատմության ամենազվարճալի դրվագը:

5 Ոչ մի բանից մարդուկն այսպիսի նախադասություն էր գրել.
Աշխարհում կա ոչ մի տեղ չտանող ճանապար:
Ի՞նչ ես կարծում՝ նախադասության բոլո՞ր բառերն է ճիշտ գրել նա: Քննարկի՛ր ընկերոջդ հետ:

– Իմ գլուխը պտտվեց,– ասաց ոչ մի բանից մարդուկը:

– Եվ եթե նույնիսկ գլուխդ պատին տաս, ոչ մի բան էլ չի լինի:

Մարդուկը որոշեց փորձել. մի պատ գտավ, որ գլուխը պատին տա: Բայց տես, թե ինչ դուրս եկավ՝ պատն էլ էր ոչ մի բանից: Եվ քանի որ մարդուկն ուժեղ էր թափ առել, խփելիս անցավ պատի մյուս կողմը: Այնտեղ ոչի՛նչ չկար:

Մարդուկն այնքան հոգնեց այդքան ոչ մի բանից, որ քնեց:

Երազում տեսավ՝ իբր ինքը ոչ մի բանից մարդուկ է, քայլում է ոչ մի տեղ չտանող ճանապարհով, հանդիպում ոչ մի բանից մկնիկի:

Երազում մարդուկը նույնիսկ պանրի անցքեր կերավ: Ճիշտ էր ասում մկնիկը՝ այդ անցքերն իսկապես հոտ չունեին և քաղցր էին:



1 Կատակ առաջադրանք

Ստեղծիր մի խաղ ոչ մի բանից:

Ինչ անուն կդնես դրան: Ո՞ւմ հետ կխաղաս այդ խաղը:

Հարցեր

1. Ինչ երազ տեսավ ոչ մի բանից մարդուկը:

2. Հորինիր Ջաննի Ռոդարիի պատմության շարունակություն. ուրիշ ո՞ւմ կարող է հանդիպել մարդուկը:



2 Գտիր, թե ինչ սխալներ կան նկարում: Ո՞րն է ճիշտը:

ԱՆՁՐԵՎ ՈՒ ԱՂԲԵՐ

Ժողովրդական խաղիկ

Անձրև՛, անձրև՛, ցա՛ծ արի,
Բուսնի ցորեն ու գարի.
Ցորենը տանեմ ջրաղացին տամ,
Ջրաղացն ինձ ալյուր տա,
Ալյուրը տանեմ ջրին տամ,
Ջուրը ինձ խմոր տա,
Խմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրը ինձ գաթա տա,
Գաթան տանեմ հովվին տամ,
Հովիվը ինձ գառ տա,
Գառը տանեմ Աստծու գոտիկին* տամ,
Աստծու գոտիկն ինձ աղբեր տա:
Աստծու գոտի՛կ,
Աստծու գոտի՛կ,
Տո՛ւր ինձ նախշուն աղբերիկ:
Աղբե՛ր, աղբերի՛կ սիրուն,
Սպասում ենք քո գալուն,
Աղբե՛ր, աղբե՛ր, ջա՛ն աղբեր,
Իմ թև ու թիկունք աղբեր:

Հարցեր

1. Բանաստեղծության հերոսն ինչո՞ւ էր ուզում, որ անձրև գա:
2. Ո՞ւմ և ինչո՞ւ էր Աստծու գոտուց՝ ծիածանից, խնդրում բանաստեղծության հերոսը:
3. Դու ի՞նչ կխնդրես Աստծու գոտուց:

2 Եթե դու լինեիր բանաստեղծության հերոսը, ի՞նչ բառեր կօգտագործեիր դիմելիս:

3 Հետաքրքիր է եղբայր բառի անցած ճանապարհը.
եղբայր – աղբեր – ախպեր – ապեր:

1 **Մրցույթ դասարանում**
Ո՞վ արագ կասի, թե բանաստեղծության հերոսն ինչ պիտի տար ջրաղացին, ջրին, թոնրին, հովվին, Աստծու գոտիկին և ինչ պիտի վերցներ նրանցից:

4 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

ԿՈՐԱԾ ՕՐԸ

Վալենտինա Օսեևա

Վարդանի եղբոր մոտ եկավ նրա ընկերը: Նա գլխարկը նետեց մի կողմ և դժգոհ ձայնով ասաց.

– Ամբողջ օրս կորավ:

Երբ ընկերը գնաց, Վարդանը եղբորը հարցրեց.

– Ինչպես կարող է օրը կորչել: Միթե բոլոր օրերը մեկ չեն:

– Այո՛, ժամանակի տեսակետից բոլոր օրերը մեկ են,– պատասխանեց եղբայրը,– բայց նրանք տարբեր են լինում ըստ գործի: Այն օրը, որի ընթացքում մարդ ոչ մի օգտակար գործ չի արել կամ ոչինչ չի սովորել, կորած օր է:

Դրանից հետո Վարդանը քնելուց առաջ եղբորը պատմում էր այն ամենի մասին, ինչ արել էր օրվա ընթացքում, և միշտ հարցնում էր.

– Այսօրվա օրը կորած չէ, չէ՞:

Հարցեր

1. Ինչո՞ւ էր դժգոհ Վարդանի եղբոր ընկերը:
2. Ինչ բացատրեց եղբայրը Վարդանին:
3. Ինչպե՞ս պետք է ապրես, որ օրդ չկորչի:

ընթացիկ

1 Թվարկածներից որո՞նք ես դու կատարում դպրոցից տուն գալուց հետո, ինչ հերթականությամբ: Գրի՛ր տետրում:

խաղում եմ դրսում	լվացվում եմ
դասերս եմ պատրաստում	ճաշում եմ
գիրք եմ կարդում	նկարում եմ
հեռուստացույց եմ դիտում	ընթրում եմ
օգնում եմ մայրիկիս	խաղում եմ տանը

Եթե կատարես այս թվարկածները, ինչ ես կարծում՝ այդ դեպքում օրը կորած կլինի՞, թե՞ ոչ:

2 Մրցույթ դասարանում

Ինչ կարող ես անել հետևյալ առարկաներով.

գերան, մեխ, մկրատ, սանր, խոզանակ, ակնոց:

Ո՞վ կարող է ավելի շատ տարբերակներ ասել:

Օրինակ: Մկրատով կարելի է կտրել տարբեր բաներ, որպես կարկին օգտագործել, խոտ հնձել, ձուկ բռնել, հող փորել, որպես ցից խփել գետնին, օղակները կտրել և պատրաստել ականջօղեր, կախել պատից որպես նկար, պատրաստել տիկնիկ, նվեր տալ մեկին, արջի դեմ կռվել:

ԱՇԽԱՐՀՆ ԷԼ ՄԻ ՀԵՔԻԱԹ Է

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ բնագրեր ուսումնասիրեցիր, հիշո՞ւմ ես՝ ովքեր էին դրանց հեղինակները:
2. Ո՞րն էր քեզ համար ամենահետաքրքիր, ամենազվարճալի, ամենազարմանալի ստեղծագործությունը:
3. Դասարանում կազմակերպեք խաղ-մրցույթ՝ «Ամենահնարամիտ սուտը» թեմայով: Հորինեք ամենաանվնաս, ամենազարմանալի, ամենագեղեցիկ սուտը: Բանավիճեք այդ հարցի շուրջ:
4. Հիշի՛ր անցած բանաստեղծություններից քեզ դուր եկած մի քառատող, արտասանի՛ր և գրի՛ր ինքնաթելադրությամբ:
5. Ի՞նչ հասկացար՝ ինչո՞ւ է աշխարհը մի հեքիաթ:

6 Արդյո՞ք ճի՞շտ են ընդգծված նախադասության գլխավոր անդամները: Եթե ճիշտ են, կողմին դի՛ր 1, եթե սխալ՝ 0:

Բրդոտ արջը փնթփնթում է:
Կովը կաթ է տալիս:
Ծիտիկը ծլվլում է ծառի ճյուղին:
Սկյուռիկը վազում է:
Մի գեղեցիկ ավտոմեքենա սլանում էր:
Երեխաները վազեցին դեպի գետափ:

7 Արտագրի՛ր տետրում: Եթե նախադասություն է, կողմին դի՛ր 1, եթե նախադասություն չէ՝ 0:

Օրերը կարճացան:
Հարավ թռչունները են չվում դեպի:
Քաղաքը մառախուղի մեջ է:
Նույնիսկ տները երևում մոտիկ չեն:

8 Ի՞նչ տարբերություն կա շարադրանքների միջև: Նախադասությունների ո՞ր խումբն է տեքստ, ո՞րը՝ ոչ:

Եկավ գարունը: Ձյունը հալվեց: Ծաղիկները ժպտում են: Թռչունները սկսեցին երգել: Առվակները հոսում են դեպի գետերը: Օրերը տաքացել են:

Ձորի մեջ արդեն ծաղկել է նշենին: Ավտոբուսի մեջ նըստած էին աշակերտներ: Մարզադաշտում իրենց ուժերն են չափում թիմերը: Դպրոցականներն ուրախ ճիչերով դուրս եկան դպրոցից:

ԱՌԱՁԱԴՐՈՒՄ Է ԳԻՐՔԸ

1 Հորինիր մի պատմություն նկարի շուրջ: Ո՞ր կենդանին ինչպես է անցկացնում ձմեռը:

2 Կարդա՛ նկարելուկը և գրի՛ր:

ԿԴՆ 

3 Կարդա՛ գաղտնագրված առածը և գրի՛ր:

Ա	Վ	Ր	Չ	Ե	Ի
Վ	Ի	Ա	Ն	Ն	Ն
Ա	Ձ	Տ	ՈՒ	Շ	Ի

4 Ո՞ր բառակապակցություններն են իմաստով իրար մոտ: Ո՞րն է «ավելորդ»: Ինչո՞ւ:

Իրեն կորցնել
Հույսը կտրել
Պարանը կտրել
Գլուխը կորցնել
Թևերը թուլանալ

5 Բառերը բաժանիր երկու խմբի և գրի՛ր.
ակ, կաթ, ձոր, օղ, ձի, եզ, հող, ծառ:

6 Բառերը բաժանիր երկու խմբի.
խոտ, մողես, օղակ, գիրք, գրիչ, հավ:
Ինչ օրինաչափությամբ բաժանեցիր: Հիմնավորիր:

1 Գրի՛ր, թե որ կենդանին որտեղ է ապրում և ինչ է ուտում:
Օրինակ: Շունն ապրում է շնաբնում և ուտում է լակ:

2 Նկարով արտահայտված առարկա ցույց տվող բառերը գրի՛ր մի սյունակում, գործողություն ցույց տվող բառերը՝ մյուս:

3 Հակառակ իմաստ ունեցող բառերը տեղադրելով առածի մեջ՝ վերծանի՛ր առածը:

.... հետևից ընկնողը .... էլ կկորցնի:

Ծույլը հաց ուտելիս .... է, սովորելիս՝ ....:

(առողջ, շատ, քիչ, հիվանդ)

4 **Գաղտնագիր**

Վերծանի՛ր, թե ինչ է գաղտնագրված և գրի՛ր:

ՑՐՆՆՌՌ





ԿՈՒՐԵ ԿԿՐԻԱ ՁԵՄ ՆԵԼԸՆԿ **ԸՉՔԱ ՐԱՆՎ ՆԱՄԼ**

1 Դարձվածքի բառերում տառերը «շփոթել են» իրենց տեղերը: Վերականգնիր դարձվածքները՝ օգտվելով համապատասխան նկարներից և գրիր:

2 Գտիր, թե որ արմատն է «ճյուղեր տվել» ու ստեղծել այս բառերը.

խաղացող, խաղալ, խաղալիք, խաղիկ, խաղարան, խաղացնել:

Փոխելով այդ բառի առաջին տառը՝ ստացիր նոր բառեր:

3 Պարզ բառերը դարձրու ածանցավոր.

տանձ, ճուտ, խոզ, հավ, թել, կապ, թիթեռ:

4 Գրիր, թե ինչ ես տեսնում նկարներում: Բառերի կողքին գրիր համապատասխան հարցերը:

5 Յուրաքանչյուր անգամ նախադասությունից հանիր մեկ երկրորդական անդամ: Վերջում ստացիր միայն գլխավոր անդամներից կազմված մի նախադասություն:

Դպրոցական երեխաները սրտատրոփ սպասում էին սիրելի ուսուցչուհուն:

1 Անվանիր ընտանիքի անդամներին և գրիր:

2 Աջ սյունակի ածանցներով և ձախ սյունակի արմատներով կազմիր ածանցավոր բառեր.

տուն	ավոր
թագ	ան
փայտ	դժ
բախտ	եղեն

3 Պարզ բառերը դարձրու ածանցավոր.

ծառ, հող, ջուր, քար, քամի, անձրև:

4 Ընդգծիր միայն նախադասությունները:

Ինքնաթիռը թռչում է:
Ավտոմեքենան արագորեն ճանապարհով:
Լսվում էր գնացքի անիվների չխկչխկոցը:
Գեղեցիկ համակարգիչ:
Արամը սիրում է նկարել:

5 Առածի մեջ ընդգծիր բարդ բառը:

Մուկը ծակը չէր կարողանում մտնել, ցախավելն էլ պոչից կապեցին:

6 Գրիր առարկաների անունները: Դրանցով կազմիր 3 բարդ բառ:

7 Ո՞ր բառերը նախադասությունից հանելուց հետո նախադասությունն իմաստ չի ունենա: Ընդգծիր:

Սպիտակ արջը ապրում է սառույցների մեջ:
Կանաչ կոկորդիլոսը բնակվում է գետում:

ՓՈՔՐԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Ալ – մուգ կարմիր

Ակնամոմ – ծաղկահյութերից գոյացող նյութ, որ պատրաստում են մեղուները և ծեփում փեթակի անցքերը

Ահարկու – ահ, սարսափ գցող, խիստ վախեցնող

Ահեղ – ահարկու, սարսափելի, ուժգին

Անապատ – անջուր, աղքատ բուսականությամբ, ավազածածկ տարածք

Անհոգ – հոգսերից ազատ, ապահով

Անհոգի – անխիղճ, անսիրտ, անտարբեր

Անձրևոց –

Անուշակ – անուշիկ, դուրեկան

Անփույթ – անհոգ, անտարբեր, անուշադիր

Ապուր – ջրիկ կերակուր

Առատ – մեծ քանակությամբ, շատ

Առոք-փառոք – մեծ փառքով, շուքով, համարձակորեն, հանդիսավոր կերպով

Աստծու գոտիկ – ծիածան

Աստղադիտարան – գիտական հիմնարկ, որն զբաղվում է երկնային մարմինների ուսումնասիրությամբ

Աստղանավ – տիեզերանավ, դեպի աստղերը թռչող նավ

Բանջար – ուտելի բույսեր, կանաչի

Բարուր – 1. Երեխային փաթաթելու փոքրիկ սավան. 2. Փոխաբերական իմաստով՝ ծածկույթ, փաթույթ

Բրդել – կտոր-կտոր անել

Գիրուկ – գեր, կլորիկ

Գողտիկ-մողտիկ – գողունի, թաքուն, վախվորած

Դագանակ – մահակ, ձեռնափայտ

Դայակ – դաստիարակչուհի, խնամակալ

Դերձակ – կարուձև անող արհեստավոր

Եզր – ծայր, վերջ, սահման

Երկվորյակ – մի մորից միասին ծնված զավակներից յուրաքանչյուրը

Զայրույթ – սաստիկ բարկություն, ջղայնություն, կատաղություն

Զարհուրելի – սարսափելի, ահարկու

Զորանալ – ուժեղանալ, մեծանալ

Զվարթ – ուրախ, աշխույժ, կայտառ

Ընտելանալ – սովորել, վարժվել, մտերմանալ

Թամբել – թամբը՝ նստելու հարմարանքը, ձիու, էշի, ջորու վրա կապել

Թրթուր – միջատների՝ ձվից դուրս եկած որդ

Թուխ – սևին տվող, մուգ գույնի

Ժայռափոր – ժայռի մեջ փորված

Իրավ – իրոք, իսկապես

Լրագիր – թերթ

Խալ – մաշկի վրա ի ծնե գոյացած բիծ, պուտ, խայտ

Խաղիկ-տաղիկ – ժողովրդական փոքրիկ երգ

Խայտաբղետ – գույնզգույն, խատուտիկ

Խատուտիկ – խայտեր, խալեր, բծեր ունեցող

Խնամել – հոգ տանել մեկի նկատմամբ, սնել, պահպանել, խնամքով, հոգատարությամբ շրջապատել մեկին

Խոշորացնող – խոշոր, մեծ, հստակ ցույց տվող

Խորհրդավոր – գաղտնիք պարունակող

Խուրձ – հնձած հացաբույսի, խոտի կապուկ

Ծիծառ – ծիծեռնակ

Ծիրանի – բոցագույն, դեղնակարմրավուն, ծիրանագույն

Ծխամորճ –

Կալվոր – հացաբույսերից հացահատիկը գյուղատնտեսական գործիքով՝ կամով առանձնացնող, կալսող մարդ

Կավ – հողի նման նյութ, որը խոնավ վիճակում դառնում է խմորի նման: Օգտագործում են քանդակագործության մեջ, շինարարությունում, պատրաստում են կարասներ, պուտուկներ, կժեր և այլն:

Կարաս –

Կիզիչ – կիզող, այրող

Կոտ – հացահատիկ չափելու փայտե աման

Կուժ –

Հանդ – դաշտ, արտ

Հարդ – հացահատիկների մանր կտրատած ցողուններ

Հետապնդել – մեկին հետևել, մեկի հետևից գնալ

Հոգատար – հոգ տանող, հոգսերն իր վրա վերցնող, ուշադիր
Հովիտ – լեռների միջև ձգվող հարթավայր
Հոր – գետնի մեջ փորված խոր փոս
Հուշիկ – կամաց-կամաց, հանդարտ
Ճիտ – վիզ, պարանոց
Մառան – գետնի մեջ փորված նկուղ՝ մթերք պահելու համար
Մատենադարան – հին ձեռագիր գրքերի հավաքումով, պահպանումով զբաղվող հիմնարկություն, գրադարան
Մեգ – գետնի վրա տարածվող թանձր մառախուղ, մշուշ
Մշուշ – մառախուղ, մեգ
Մոլորակ – Արեգակի շուրջը պտտվող և նրանից լույս ստացող երկնային մարմին, օրինակ՝ մեր Երկիրը



Մոլորվել – չիմանալով՝ ուղիղ ճանապարհից շեղվել, ճանապարհը կորցնել
Նազիր – բարձրաստիճան մարդ թագավորական պալատում, նախարար
Նախշուն – նախշերով զարդարված, փոխաբերական իմաստով՝ սիրուն, գեղեցիկ
Նահապետ – այն անձը, որից սկիզբ է առել տվյալ ազգը: Հայերի համար՝ Հայկ Նահապետը:
Նարգիզ – ծաղիկ

Նունուֆար – ծաղիկ

Շուշան – ծաղիկ

Ոսկեզօծել – ոսկեգույն դարձնել, դեղին գույն տալ
Ոստոստել – ցատկոտել
Որոնել – փնտրել, աշխատել հայտնաբերել՝ գտնել
Որոտ – կայծակին ուղեկցող դղրդյուն, ամպի գոռոց
Չալ – խատուտիկ, պուտ-պուտ, գույնզգույն, վառվռուն
Չարչի – մանր-մունր ապրանքներ վաճառող, մանրավաճառ
Պարահանդես – պարելու համար կազմակերպված հանդես
Պոչատ – պոչը կտրված
Պուրակ – ծառապատ տարածք, այգի
Զրանցք – արհեստական մեծ հուն ջրի համար
Զրհոր – խոր փոս գետնի ջրաբեր շերտից ջուր հավաքելու և օգտագործելու համար
Զրվեժ – բարձունքից սրընթաց կերպով ցած թափվող ջրի հոսանք
Սայթաքել – ոտքը սահել
Սաստիկ – ուժգին, բուռն, խիստ
Սեղանատուն – ուտելու և հյուրասիրության սենյակ, ճաշասենյակ
Սինձ – ուտելի բանջարաբույս

Սկահակ – գավաթ, բաժակ
Մնդուկ – հագուստեղենի մեծ արկղ
Սոսի – ծառի տեսակ

Ստորոտ – լեռան ներքևի մասը
Տակ – ճակնդեղ, բազուկ (արմատը)

Տաշտակ – փայտից, թիթեղից, կավից պատրաստած երկարավուն կամ կլոր աման

Տնկի – նոր բուսած, նորածիլ ծառ
Ցող (շաղ) – բույսերի, գետնի վրա նստող ջրի կաթիլներ
Ցրտահար – ցրտահարված, ցրտից վնասված
Ուղեկից – մեկի ճամփորդության, ուղևորության ընկեր, ճանապարհ ցույց տվող
Ուրագ – հյուսնի գործիք



Փարվել – փաթաթվել, գրկախառնվել
Փոփոխակի – փոփոխական, իրար հաջորդաբար փոխարինող
Փչակ – ծառի բնի մեջ փտումից, քայքայումից առաջացած խոռոչ
Փքվել – պարծենալ, մեծամտանալ, քիթը ցցել
Քարհատ – քար կտրող, քար հատող բանվոր, քարտաշ
Քոթոթ – ձագ
Քուրք – մուշտակ
Օրնիբուն – ամբողջ օրը

ՈՐՈՇ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Էջ

82. 2. Պայծառ – արև, կանաչ – տերև, երգող – թռչնակ, վախկոտ – նապաստակ: 3. Օրինակ: Որսի: Ոզնի: Ո՛չ: Ոսկանը: Ոնց որ թե: Հյուր: Հավ: Հա՛: Հասմիկը: Հազիվ թե: Մարզադաշտ: Մողես: Մի քիչ: Մարտինը: Մի փոքր: Եղեգնաձոր: Եղնիկ: Ես՝ ո՛չ: Երեմը: Շուկա: Շուն: Շատ: Շավարշը: Շա՛տ-շատ:
83. 2. Ձնջում են: Նկարում են: Գծում են: Գրում են: 3. Թեյաման, ծովափ, խոտհունձ: 7. Երազ:
87. 3. Բեն (մյուսները ձայնավոր են):
88. 1. Ընտանի՝ խոզ, կով, ձի, ոչխար: Վայրի՝ գայլ, կրիա, աղվես, արջ: 2. Դժբախտ, անբախտ, բախտավոր (ածանցավոր բառեր են):
89. 1. Օրինակ՝ տիկնիկ, կերաման, շերտ, տեղացի, մարդ: 2. Շունը հաչում է: Կատուն մլավում է: Կովը բառաչում է: Ձին խրխնջում է: Այծը մկկում է:
91. 2. Պառավ – կով – արտ – աղբյուր – աղջիկ – չարչի – հավ – կալվոր:
92. 1. Օրինակ՝ անտառ, աղջիկ, ակնոց, երգ, գիտնական: 2. Սեղանատուն: 3. Արջ:
93. 2. Արջ – քոթոթ, ոչխար – գառ, կով – հորթ, այծ – ուլ, խոզ – խոճկոր:
95. 2. Սեդան ու Շաքեն ուշանում են: 5. Ձուկը լողում է: Թռչունը թռչում է, ճախրում է: Մորեխը թռչկոտում է: Շունը վազում է: Օձը սողում է: 6. Թույն, ծլել, լեզու: 8. Ջրվեժը (բարդ բառ է): Ճովը (հոսող չէ):
96. 10. Բժիշկ Այբոլիտ, Պույպույ մուկիկ, Քաջ Նազար, Կարմիր Գլխարկ, Չիպոլինո, Նուֆ-Նուֆ, Նաֆ-Նաֆ, Նիֆ-Նիֆ, Վինի Թուխ, Բուրատինո:
97. 1. Գարուն: 2. Ամառ: 3. Աշուն: 4. Ձմեռ:
98. 3. Հավ, հոր: Կետ, կով:
99. 3. Անձրև, գետ:
100. 1. Ձուկ: Օրինակ՝ ձկնորս, ձկնագող, սղոցաձուկ, ձիաձուկ, գայլաձուկ: 4. Երեսսրբիչ, քարայծ, ականջող: 6. Որոտ: Անձրև:
101. 3. Անձրևոց: 6. Ճիաձան:
102. 1. Ջրային՝ առագաստանավակ, սուզանավ, շոգենավ: Օդային՝ ուղղաթիռ, ինքնաթիռ, հրթիռ: Ցամաքային՝ հեծանիվ, ավտոմեքենա, շոգեքարշ: 4. Խոսել, լսել, քայլել, շնչել:
103. 1. Երբ արևն ու անձրևը միանում են, ծիածան է ծնվում: Ավելացավ «քամի» բառը:
104. 1. Պտուղը ծառից հեռու չի ընկնում: 2. Թևեր, փոսեր, ձեռքեր: Տնկիներ, տերևներ, փոքրիկներ: 3. Տնկին աճեց, դարձավ ծառ: 4. Ծառ:
105. 1. Գրված են այբբենական կարգով: 3. Եզակի թվով՝ հատիկ, լոբի, ծիլ, հող: Մնացածը հոգնակի են: 5. «Ո՞րն է «ավելորդը»»: Լոբի (միակ ոչ ածանցավոր բառն է):
106. 9. ա) Եվ առաջին ամպն ուժեղ հրեց երկրորդին («Կռվարարները»): բ) Դեղձը դեղին ներկեց, իսկ խոտը՝ կանաչ («Արևն ու ծիածանը»): 11. Գարուն:
109. 4. Շուն:
110. 1. Մրջնանոց: 2. Աշխատասեր, խելացի, համերաշխ, խայթող: 4. Տետր, գիրք:
111. 3. Ոզնի:
112. 1. Կռունկ: 2. Կռունկ, կրունկ: 3. Նշաններ, ձեռքեր, աղջիկներ, պատեր, կռունկներ:
113. 1. Ամպ: 2. Ներքև, հեռանալ, կանգնել, հեռու, կարճ, կորցնել, դժգոհ, հիվանդանալ: 3. Հասմիկ (մնացածը՝ որ կողմից կարդաս՝ նույնն է): Կատակ (մնացածն անձնանուններ են):
114. 3. Նկարում է: Թռչում է: Կարում է: Եփում է: Թխում է: Բուժում է:
116. 2. Ծաղկավաճառ, տոմսավաճառ, հացավաճառ, գրավաճառ:
119. 2. Ամպ, ձոր, լուռ, արտ, քամի, նկար («լուռ» բառն է «ավելորդը», մնացածներն առարկա ցույց տվող բառեր են): 4. Ճերմակ՝ հատկանիշ ցույց տվող միակ բառը: Սպիտակ 7. Հավը (մնացածը թռչուն չեն կամ չորքոտանի են):
120. 8. Կենդանիներ: 9. Աղավնի, աքաղաղ:
124. 5. Միեր:
125. 1. Դավիթը՝ ազնիվ, քաջ, համարձակ: Մելիքը՝ խորամանկ, վախկոտ, խաբեբա: 3. Սասունցի Դավթի արձանի հեղինակն է քանդակագործ Երվանդ Քոչարը:
126. 1. Օրինակ՝ ժամացույց, ինքնաթիռ, արևաձագ, լուսատու, պատուհան, ձեռագիր: 3. Օրինակ՝ մարդասեր, խաղանկյուն,

ճաշասեղան, գետաձի, ապուպապ: 4. ա) ապակին, բ) ձյունը: 5. Նվագարան:

128. 1. Օրինակ՝ Ավագ, Բաբկեն, Գալուստ, Դավիթ, Եղիշե, Զորայր, Էմին: Անունները գրված են այբբենական կարգով: 2. «Աջուձախ»: Նկար, սարդ, կթել, բարև, տերև: 3. Էջ, մի: Թագ, որ: Վաղ, պատ: 5. Սար: Լոր: Վեց: Ութին:

129. 4. Մարդկանց անուններ՝ Տրդատ, Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց: Տեղանուններ՝ Էջմիածին, Մասիս, Վաղարշապատ:

130. 1. Թխում են: 3. «Համակարգիչ» բառը կարդացվում է գրված բառերի առաջին տառերով: 5. Լար: 7. Համակարգիչ:

131. 2. Օրինակ՝ հատիկ, հասակ: Աթոռ, ավանակ: Փական, փաթիլ: 3. Կապույտ լամպ, դեղին աշուն, կանաչ բակ:

132. 1. Մոմ, զանգ, խաչ, վանք, նկար: 2. Գեղարդը վանք է Ազատ գետի ափին: 3. Չկա մոմը:

134. 1. Օրինակ՝ աստղ, տղա, տաղ, տաղարան, սիրտ: 4. Երկինք: 7. 1: 0: 0: 0: 1: 1:

135. 1. Սուր – սեր: 2. Աստղեր: 3. Ց: 5. Ծառ:

138. 9. Կապիկը հիվանդ է:

140. 5. Աշխարհ:

143. 3. Կավիճ – գրատախտակ, թուղթ – տետր, ձյուն – դահուկ: 4. Պանիր: «Ընկերները»՝ կաթ, մածուն, կարագ, թթվասեր և այլն: 7. Օրինակ՝ պատ, ասա, սան:

144. 1. «Աջուձախ»: Գնացք, քսան, գիրք, տարիք, բարիք, քայլ: 3. Հաց: «Ընկերները»՝ լավաշ, գաթա, բլիթ, տորթ, խմոր և այլն:

149. 2. Կենդանու հետք: 3. Ավազի վրա տուն չեն շինի: 4. Պարանը կտրել (մնացածներն իմաստով իրար մոտ դարձվածքներ են): 5. Օրինակ՝ ա. Կենդանիներ՝ ձի, եզ: Առարկաներ՝ ակ, կաթ, ձոր, օղ, հող, ծառ: բ. Եռատառ բառեր՝ կաթ, ձոր, հող, ծառ: Երկտառ բառեր՝ ակ, օղ, ձի, եզ: 6. Օրինակ՝ ա. Կենդանիներ՝ մողես, հավ: Առարկաներ՝ խոտ, օղակ, գիրք, գրիչ: բ. Միավանկ բառեր՝ խոտ, գիրք, հավ: բ. Երկվանկ բառեր՝ մողես, օղակ, գրիչ:

150. 1. Արջ – որջ – մեղր: Սկյուռ – փչակ – ընկույզ: Հավ – հավաբուն – կուտ: Կով – գոմ – խոտ: 2. Առարկա՝ տուն, արև, մարդ: Գործողություն՝ ջրել, վազել, լողալ: 3. Ծույլը հաց ուտելիս առողջ է, սովորելիս՝ հիվանդ: Շատի հետևից ընկնողը քիչն էլ կկորցնի: 4. Ցորեն ու նուռ առա (պետք է գրել տառանունները):

151. 1. Երկու կրակի մեջ ընկնել: Աչքը վրան մնալ: 4. Տղա – ո՞վ, աղջիկ – ո՞վ, կատու – ի՞նչ, մարդիկ – ովքե՞ր, առյուծ – ի՞նչ:

152. 1. Պապիկ, տատիկ, հայրիկ, մայրիկ, եղբայր, քույր: 2. Անտուն, թագավոր, փայտեղեն, դժբախտ: 5. Ցախավել: 6. Արևաձաղիկ, սեղանատամ, զգեստապահարան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ԸՆԿԱՎ 81
Իրիկուն – Հովհաննես Թումանյան 82
Սուտասանը – Հովհաննես Թումանյան 84
Ինչպես է շունը մարդուն ընկեր դարձել – Հեքիաթ 86
Պոչատ աղվեսը – Հովհաննես Թումանյան 88
Երեք արջի հեքիաթը – Լև Տոլստոյ (թարգմ.՝ Հովհաննես Թումանյանի) 92
Առաջադրում է գիրքը 95
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 96

ԳԱՐՈՒՆ Է ԵԿԵԼ 97
Գարուն է գալիս – Համո Սահյան 98
Ձուրը – Վաս 99
Կռվարարները – Ի. Յակովլևա 100
Ամպիկը – Դավիթ Հովհաննես 102
Արևն ու ծիածանը – Վաս 103
Ո՞Ւմ ծառն է – Նանսեն Միքայելյան 104
Ավոյի ծիլը – Սիլվա Կապուտիկյան 105
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 106

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ 107
Կաքավի գովքը – Հովհաննես Թումանյան 108
Անձնազոհություն – 109
Ի՞նչ են խոսում մրջյունները – Յուրի Սահակյան 110
Ոզնին – Էդվարդ Միլիտոնյան 111
Կռունկը 112
Բժիշկ Այբոլիտն ու նրա գազանները – Կոռնեյ Չուկովսկի 114
Գլխարկավաճառն ու կապիկները 116
Մեղուն ու հավը – Ժողովրդական զրույց 117
Թե ինչպես նապաստակը մռնչաց – Վիլյամ Սարոյան 118
Առաջադրում է գիրքը 119
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 120

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է 121
Մասիս: Նոյի տապանն Արարատի վրա – Վաս 122
Փակ աչքերով – Արմեն Շեկոյան 123
Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ .. 124
Երևան – Վաս 126
Սուրբ Էջմիածին – Վաս 128
Լավաշը – Հայկ Խաչատրյան 130
Գեղարդ – Վաս 132
Աստղադիտարան – Վաս 133
Հայոց բանակը – Վաս 135
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 138

ԱՇԽԱՐՀՆ ԷԼ ՄԻ ՀԵՔԻԱԹ Է 139
Թռչունի մտածմունքը – Հովհաննես Թումանյան 140
Անմոռանալի սուտասելուկ – Վաս 141
Ես – Վիլյամ Սարոյան 142
Ոչ մի բանից մարդուկը – Ջաննի Ռոդարի 144
Անձրև ու աղբեր – Ժողովրդական խաղիկ 146
Կորած օրը – Վալենտինա Օսեևա 147
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 148
Առաջադրում է գիրքը 149
Փոքրիկ բառարան 153
Որոշ առաջադրանքների պատասխանները ... 155

Բնագրերը ենթարկվել են որոշ փոփոխություններ, համապատասխանեցվել են գրական հայերենի կանոններին, երկրորդ դասարանցիների ընկալումներին:

ՎԱՉԱԳԱՆ ԱԴԻԲԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ԹՈՐՈՍՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ՂՈՒԿԱՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ՎԱՐԴԳԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ–2

Դասագիրք 2-րդ դասարանի համար

Խմբագիրներ՝ Հրանտ Վարդանյան
Արտաշես Թադևոսյան

Շարվածքը՝ Սվետլանա Այվազյանի
Էջադրումը՝ Միքայել Աբրահամյանի
Ձևանմուշը՝ Վաչագան Ա. Սարգսյանի

«ՄԱՆՄԱՐ» հրատարակչություն
Երևան, Ղ.Փարպեցու, 9/7, հեռ. 53-79-81, 53-79-82
E-mail: manmar@manmar.am